Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի ղեկավարի
2026թ. փետրվարի 3-ի N 16-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք. Երևան, 0009, Կորյուն փողոց 15, կայք՝ http://www.ecoinspect.am/
☎ հեռ. (015) 48-48-48, էլ. փոստ՝ info@ecoinspect.gov.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 6

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ 7

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 7

Աղյուսակ 1 8

Աղյուսակ 2 9

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 9

Աղյուսակ 3 10

2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2022-2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ 13

Աղյուսակ 4 14

Գծապատկեր 1 15

Գծապատկեր 1.1 15

Աղյուսակ 5 16

Գծապատկեր 2 16

Գծապատկեր 2.1 17

Աղյուսակ 6 17

Աղյուսակ 7 18

Աղյուսակ 8 19

Գծապատկեր 3 20

Գծապատկեր 3.1 20

Աղյուսակ 9 21

Աղյուսակ 10 22

Գծապատկեր 4 23

Գծապատկեր 4.1 23

ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 23

Աղյուսակ 11 24

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐ 24

ԲԸՏՄ վարչական ակտերով սահմանված տուգանքներից պետական բյուջեի թիվ 900005024063 հաշվեհամարին կատարված վճարումների համեմատականը 25

Աղյուսակ 12 25

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ, ՔԱՆԱԿԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՀԻՄՔԵՐԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 25

421 հանձնարարագրով տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ոլորտները 26

Աղյուսակ 13 27

Գծապատկեր 5 27

Աղյուսակ 14 28

Ստուգումների շրջանակը 28

Աղյուսակ 15 29

Աղյուսակ 16 29

2025 թվականի արտածրագրային 221 ստուգումից 29

Աղյուսակ 17 30

221 հանձնարարագրերի հրապարակման հիմքերը 30

Աղյուսակ 18 32

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ 32

Աղյուսակ 19 33

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԸՏՄ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 33

Աղյուսակ 20 34

1. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 34

1.1. Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն 35

Իրականացված ստուգումներ 35

Առավել հաճախ արձանագրված խախտումները 39

Իրականացված կանխարգելիչ միջոցառումներ 39

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն 40

Աղյուսակ 21 40

Աղյուսակ 22 41

1.2. Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն 41

Իրականացված կանխարգելիչ գործողություններ 41

Վայրի կենդանիների առգրավում, հայտնաբերում, պահման պայմանների խախտում, ապօրինի որս և ձկնորսություն 41

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն 42

Աղյուսակ 23 43

Սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացված միջոցառումներ 43

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ ... 44
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ... 45
2. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ, ՋՐԵՐԻ, ՀՈՂԵՐԻ, ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ... 45
2.1. Մթնոլորտային օդի պահպանություն ... 45
Իրականացված ստուգումներ ... 45
Երևան քաղաքում իրականացված վերահսկողության արդյունքներ ... 46
Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները ... 46
Կանխարգելիչ միջոցառումներ ... 46
Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ ... 48
2.2. Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն ... 52
Իրականացված ստուգումներ ... 52
Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները՝ ... 53
Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանման ուղղությունով խախտումները նվազեցնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումներ. ... 53
Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ ... 58
2.3. Վտանգավոր նյութեր, արտադրություն ու սպառման թափոններ ... 58
Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները ... 58
Կանխարգելիչ միջոցառումներ ... 59
2.4. Հողերի օգտագործում և պահպանություն ... 60
Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները ... 60
2.5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն ... 62
2.6. Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների, վիճակագրական հաշվետվությունների ուղղություններով ... 63
3. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ... 64
Իրականացված ստուգումներ ... 64
3.1. Ընդերքի շահագործման վերահսկողություն ... 65
3.2. Հանքային ջրերի և երկրաբանական ուսումնասիրությունների վերահսկողություն ... 66
Հայտնաբերված ոչ մետաղական օգտակար հանածոյի ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերաբերյալ ... 66
Աղյուսակ 24 ... 67
Աղյուսակ 25 ... 68
Աղյուսակ 26 ... 69

Աղյուսակ 27 69
Աղյուսակ 28 69
Աղյուսակ 29 70
Աղյուսակ 30 70
Աղյուսակ 31 70
Աղյուսակ 32 71
Աղյուսակ 33 71
Աղյուսակ 34 71
Աղյուսակ 35 72
Աղյուսակ 36 72
Աղյուսակ 37 72
Արաքսի ավազանում իրականացված միջոցառումներ 73
Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողություններ 73
Առավել հաճախ արձանագրված խախտումները 74
ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 75
Կատարված հետազոտությունները՝ ըստ 2022-2025 թվականների համեմատականի 76
Աղյուսակ 38 76
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 76
Աղյուսակ 39 77
Ահազանգերի թվաքանակ 83
Աղյուսակ 40 83
Թեժ գծով ստացված ահազանգերն ըստ ուղղությունների 84
Աղյուսակ 41 84
Սոց ցանցեր ԶԼՄ հրապարակումների հիման վրա գրանցված ահազանգերն ըստ ուղղությունների 84
Աղյուսակ 42 84
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 85
Մասնակցություն ՍԻԹԵՍ կոնվենցիայի Կողմերի 20-րդ համաժողովին (COP 20) 85
Մասնակցություն միջազգային հանքարդյունաբերական համաժողովին 87
COP 17 համաժողովի նախապատրաստական աշխատանքներ 88
Համագործակցային հարաբերություններ միջազգային կազմակերպությունների (CNF և WWF) հետ 89
Համագործակցության մեկնարկ Բնության պահպանության միջազգային միության (IUCN) հետ 89

Լաբորատոր հագեցվածության ապահովում 90

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 92

Աղյուսակ 43 95

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 96

Աղյուսակ 44 96

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ 97

Աղյուսակ 45 97

ԲԸՏՄ դեմ ներկայացված հայցադիմումների, դրանց վերաբերյալ պատասխանների, ԲԸՏՄ կողմից ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, ԲԸՏՄ մասնակցությամբ ընթացքի մեջ գտնվող և ավարտված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն 99

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Խորհուրդ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդ
Գրասենյակ	Վարչապետի աշխատակազմի Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ
ԲԸՏՄ	ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Հաշվետվություն	Տեսչական մարմնի տարեկան հաշվետվություն
ՋՄՀԹՎՆՎՎ	Ջրերի, մթնոլորտի, հողերի, թափոնների և վտանգավոր նյութերի վերահսկողության վարչություն
ԸՎՎ	Ընդերքի վերահսկողության վարչություն
ԿՎՎ	Կենսաբազմազանության վերահսկողության վարչություն
ՌԳՎՎ	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն
ԻԱՓՎ	Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ԻՀՀՏԱԲ	Իրազեկման և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին
ԼՀԲ	Լաբորատոր հետազոտությունների բաժին
ՏԲ	Տարածքային բաժին
ՍԹԱ	Սահմանային թույլատրելի արտանետում
Ծրագիր	Տարեկան գործունեության ծրագիր
ՕՊՕ	Օդի պահանջվող օգտագործում
ՋՕԸ	Ջրօգտագործողների ընկերություն

ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն Հաշվետվությունը ներկայացվում է՝ ի կատարումն Հայաստանի Հանրապետության «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշմամբ հաստատված ԲԸՏՄ կանոնադրության պահանջների:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ԲԸՏՄ իրականացրել է ստուգումներ (այդ թվում նաև՝ առաձնահատուկ ստուգումներ), դիտարկումներ և վարչական վարույթներ՝ կիրառելով պատասխանատվության միջոցներ բնապահպանության ու ընդերքի ոլորտներում, ձեռնարկել է միջոցներ վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման հետևյալ ուղղություններով՝

- մթնոլորտային օդի պահպանություն
- ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն
- հողերի օգտագործում և պահպանություն
- ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն
- կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն
- վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ
- պետական փորձաքննություն
- բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ
- վիճակագրական հաշվետվություններ

ԲԸՏՄ նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:

ԲԸՏՄ խնդիրներն են՝

- բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.
- շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ ԲԸՏՄ համար սահմանվել է թվով 194 հաստիք, որից ներկայումս 42-ը՝ թափուր:

ԲԸՏՄ լիազորությունների իրականացման նպատակով 2025 թվականի կտրվածքով իրականացվել է 1,274,593.5 ՀՀ դրամի բյուջետային հատկացում՝ կատարողականը կազմում է 99,0%: Նախորդ երեք տարիների կտրվածքով ՀՀ պետական բյուջեի հատկացումները ներկայացված են *Աղյուսակ 1-ում*:

Աղյուսակ 1

ԲԸՏՄ 2025 թվականի բյուջեի համեմատականը նախորդ երեք տարիների հետ				
Հոդվածի անվանումը	*2022թ.*	*2023թ.*	*2024թ.*	*2025թ.*
	հազար ՀՀ դրամ	*հազար ՀՀ դրամ*	*հազար ՀՀ դրամ*	*հազար ՀՀ դրամ*
Ընդամենը՝ ԲԸՏՄ, այդ թվում՝	919,632.2	1,119,258.4	1,162,801.1	1,274,593.5
Ընթացիկ	916,632.2	1,061,128.4	1,104,671.1	1,188,966.5
Կապիտալ	3,000.0	58,130.0	58,130.0	85,627.0

2022 թվականի կատարողականը կազմում է 95,5%, 2023 թվականի կատարողականը կազմում է 99,3%, իսկ 2024 թվականի կատարողականը՝ 99,4%:

2025 թվականի բյուջեով հաստատված հիմնական աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատականը փաստացի վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատությունը ներկայացված են *Աղյուսակ 2-ում*:

Աղյուսակ 2

2025 թվականի բյուջեով հաստատված հիմնական աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատականը փաստացի վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարների համեմատությունը			
Քաղաքացիական ծառայության պաշտոններ	*Սահմանված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների չափը*	*Վճարված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների չափը*	*Սահմանված և վճարված միջին աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների տոկոսային տարբերությունը*
Ղ-3	532,746.2	680,517.0	27.7
Ղ-4	439,129.6	606,742.0	38.1
Մ-2	362,885.1	407,722.0	12.3
Մ-3	300,152.3	410,282.0	36.7
Մ-4	258,652.2	283,061.0	9.4
Մ-6	189,163.5	237,217.0	25.4

ԲԸՏՄ 2025 թվականի բյուջեով հաստատված *«Աշխատավարձեր և հավելավճարներ, պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ»* հոդվածներով խնայված *(թափուր հաստիքներ)* գումարները բաշխվել են աշխատակիցներին՝ աշխատանքային պարտականությունները բարեխիղճ և պատշաճ կատարելու համար:

ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարեկան գործունեությունն իրականացվել է՝ առաջնորդվելով Խորհրդի կողմից 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 11-Լ որոշումով հաստատված 2025 թվականի տարեկան գործունեության ծրագրով:

2025 թվականի 16 միջոցառումների կատարման վերաբերյալ ներկայացվում է *Աղյուսակ 3-ում*:

Աղյուսակ 3

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ընթացքը
1	*2*	*3*	*4*
1	Մթնոլորտային օդի պահպանության, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության, հողերի օգտագործման և պահպանության, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների գործածության, սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ոլորտային ուղղություններում ՀՀ օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացում	թվով 44 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	Հրապարակվել է 200 հանձնարարագիր, որից 1-ը ուժը կորցրած է ճանաչվել
		թվով 54 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		թվով 54 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
		թվով 48 տնտեսավարող սուբյեկտի մոտ ստուգման իրականացում	
2	Հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման միջոցառումներ	Հողի բերրի շերտի ապօրինի օգտագործման կանխարգելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով
3	Փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով ավազի, ցեմենտի, գաջի, խճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի տեղափոխման կանխարգելման միջոցառումներ	Բեռնատար ավտոմեքենաների անթափանց ծածկոցների բացակայության հայտնաբերում և տեղափոխվող ավազի, ցեմենտի, գաջի, խճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի շրջակա միջավար թափվելու կանխարգելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով

4	Բնապահպանական ոլորտի օրենքների փոփոխություններ և առաջարկություններ, մասնավորապես՝ Ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ	Բնապահպանության ոլորտում վերահսկողության արդյունավետ իրականացում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ
5	Իրազեկում–հանդիպումներ շինարարությամբ զբաղվող տնտեսավարողների հետ	Տնտեսվարող սուբյեկտների իրազեկվածության մակարդակի բարձրացում, հնարավոր խախտումների կանխարգելում	Կազմակերպվել են հանդիպումներ ՏԻՄ-երի, մարզպետարանների, շինարարական կազմակերպությունների հետ
6	Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ	Սիգ տեսակի ձկան վերարտադրության ապահովում և կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	Իրականացվել է ՇՄ, ՆԳՆ, Էկոպարեկային ծառայության, Գեղարքունիքի մարզպետարանի, «Սևան» ազգային պարկ»-ի հետ համատեղ
7	Կենդանիների վերարտադրության և որսի թույլտվության ժամանակահատվածում ապօրինի որսորդության դեմ անցկացվող միջոցառումներ (ստուգայցեր, շրջայցեր)	Կենդանական աշխարհի օբյեկտների ապօրինի օգտագործման կանխարգելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով
8	Ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման միջոցառումներ (ստուգայցեր, շրջայցեր)	Փայտանյութի ապօրինի օգտագործման կանխարգելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով
9	Վայրի կենդանիներ պահելու վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում (մոնիթորինգ)	Ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից պահվող վայրի կենդանիների պահման պայմանների խախտման կանխարգելում	Իրականացվել է ԲԸՏՄ ղեկավարի հրամաններով COP17-ի շրջանակներում
10	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ

	փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ		
11	«Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ
12	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ԲԸՏՄ-ի անձնակազմին անօդաչու թռչող սարքերի կիրառման համար անհրաժեշտ ծրագրերի (Օրթո և Լիդար) և վերլուծական գործիքների ուսուցում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	Իրականացվել է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համայսարան» հիմնադրամի հետ համատեղ
13	Երևանի պետական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ԲԸՏՄ-ի անձնակազմին Աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) ուսուցում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	Իրականացվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ համատեղ
14	Թվային շտեմարանի ստեղծում	Վերահսկողության արդյունավետության բարձրացում	Ներկայացվել է առաջարկություն ԲՏԱ նախարարություն և ընդգրկվել է ԲԸՏՄ 2026 թվականի Տարեկան գործունեության ծրագրում
15	ՀՀ կառավարության 2019 թվականի N 1423-Ն որոշման մեջ փոփոխությունների և լրացումների առաջարկի ներկայացում Գրասենյակ	Գործող օրենսդրական դաշտի համապատասխանության ապահովում	Ներկայացվել է առաջարկություն ՏՄՀ գրասենյակ
16	Տարածական չափագրումների, հողի, մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների և նմուշառումների հետազոտությունների վարչության ստեղծում	ՀՀ օրենսդրության համապատասխանության ապահովում	Վարչությունում բաժնի ստեղծումը ներկայացվել է ՔԾԳ հարթակ, գտնվում է համաձայնեցման գործընթացում

Համաձայն 2025 թվականի տարեկան գործունեության ծրագրի նպատակների՝ ԲԸՏՄ օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացվել է բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարում և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելման կամ նվազեցման համար:

Վերոնշյալ նպատակների իրագործման առնչությամբ իրականացվել են վերահսկողական գործառույթներ (ստուգումներ (այդ թվում առանձնահատուկ ստուգումներ), դիտարկումներ և վարչական վարույթներ), ինչպես նաև կանխարգելիչ, իրազեկման և խորհրդատվական միջոցառումներ:

2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2022-2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում արձանագրվել է ընդհանուր 3,303 իրավախախտում, որը 2024 թվականի համեմատությամբ աճել է 30,2%, 2023 թվականի համեմատությամբ աճել է 29,8%, իսկ 2022 թվականի համեմատությամբ աճել է 38,0%:

Վերահսկողության ուղղություններով նախորդ երեք տարիների իրավախախտումների համեմատականով արձանագրվել են առավել բարձր ռիսկային ուղղություններ, որոնց քանակական և տոկոսային արտահայտումը ներկայացված է *Աղյուսակ 4-ում*:

Աղյուսակ 4

Հայտնաբերված իրավախախտումների թվի համեմատականը նախորդ երեք տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների									
h/h	***Ուղղությունները***	***2022***		***2023***		***2024***		***2025***	
		քանակ	*%*	*քանակ*	*%*	*քանակ*	*%*	*քանակ*	*%*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	755	31.6	869	34.2	782	30.8	1,066	32.3
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	142	5.9	155	6.1	134	5.3	198	6.0
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	179	7.5	329	12.9	397	15.7	617	18.7
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	99	4.1	161	6.3	160	6.3	202	6.1
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	281	11.7	199	7.8	148	5.8	112	3.4
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	108	4.5	130	5.1	180	7.1	327	9.9
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	487	20.4	175	6.9	134	5.3	207	6.3
8	**Վիճակագրական հաշվետվություններ**	279	11.7	473	18.6	520	20.5	499	15.1
9	**Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)**	46	1.9	42	1.7	67	2.6	67	2.0
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	17	0.7	11	0.4	14	0.6	8	0.2
ԸՆԴԱՄԵՆԸ		**2,393**	**100**	**2,544**	**100**	**2,536**	**100**	**3,303**	**100**

Գծապատկեր 1



Գծապատկեր 1.1



Վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրված իրավախախտումների հիմքով հարուցվել է 2,433 վարչական վարույթ, որից 276-ը միայն ստուգումներով: Վարչական վարույթները հարուցվել են ԲԸՏՄ նախաձեռնությամբ, ՀՀ վարչապետի հանձնարարականների, Պետական եկամուտների կոմիտեի, Տեղական ինքնակառավարման, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների, ահազանգերի և այլ հիմքերով: ԲԸՏՄ կողմից վարչական վարույթների քանակը նախորդ երեք տարվա համեմատականով ներկայացված է *Աղյուսակ 5-ում*:

Աղյուսակ 5

Ժամանակահատվածը	Հարուցված վարչական վարույթների	
	քանակը	***որից՝ ստուգումներով***
2022 թվական	930	241
2023 թվական	1,352	211
2024 թվական	1,645	291
2025 թվական	2,433	276

Համաձայն այդ տվյալների 2025 թվականին հարուցված ընդհանուր վարչական վարույթների թիվը 2024 թվականի համեմատությամբ աճել է 47,9%, 2023 թվականի համեմատությամբ՝ 79,9%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 161,6%, իսկ միայն ստուգումներով վարչական վարույթների թիվը 2024 թվականի համեմատությամբ նվազել է 5,1%, 2023 թվականի համեմատությամբ աճել է 30,8%, իսկ 2022 թվականի համեմատությամբ աճել է 14,5%:

Գծապատկեր 2



Գծապատկեր 2.1



Հարուցված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժի է ենթարկվել 1,091 անձ, որոնց նկատմամբ կիրառվել է թվով 1,403 վարչական տույժ: Նախորդ երեք տարվա համեմատականը կիրառված տույժերի քանակի և վերահսկողական ուղղությունների առնչությամբ ներկայացված է *Աղյուսակ 6-ում և Աղյուսակ 7-ում*:

Աղյուսակ 6

Ժամանակահատվածը	**Վարչական տույժի ենթարկված անձանց քանակ**
2022	749
2023	872
2024	992
2025	1,091

Համաձայն այդ տվյալների 2025 թվականին կիրառված վարչական տույժերի թիվը 2024 թվականի համեմատությամբ աճել է 4,2%, 2023 թվականի համեմատությամբ՝ 25,7%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 37,2%:

Աղյուսակ 7

ԲԸՏՄ կողմից կիրառված վարչական տույժերի քանակի համեմատականը նախորդ երեք տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների					
Հ/Հ	**ՈՒղղությունները**	**2022**	**2023**	**2024**	**2025**
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	218	208	212	179
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	28	42	81	114
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	154	216	291	399
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	80	112	128	122
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	87	99	92	61
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	63	73	102	113
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	86	51	58	81
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	253	258	325	279
9	**Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)**	40	47	51	46
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	13	10	6	9
ԸՆԴԱՄԵՆԸ		**1,022**	**1,116**	**1,346**	**1,403**

Համաձայն այդ տվյալների 2025 թվականին կիրառված վարչական տույժերի թիվը 2024 թվականի համեմատությամբ աճել է 4,2%, 2023 թվականի համեմատությամբ՝ 25,7%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 37,2%:

Հարուցված վարչական վարույթների արդյունքում նշանակված վարչական տուգանքի չափը կազմել է 248,750,000 ՀՀ դրամ: Նախորդ երեք տարիների համեմատականը ներկայացված է *Աղյուսակ 8-ում*:

Աղյուսակ 8

ԲԸՏՄ կողմից կիրառված վարչական տուգանքի գումարի համեմատականը նախորդ երեք տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների					
Հ/Հ	***ՈՒղղությունները***	***2022***	***2023***	***2024***	***2025***
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	22,340,000	20,550,000	22,950,000	18,430,000
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	2,970,000	3,570,000	6,960,000	11,870,000
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	13,000,000	26,000,000	31,650,000	34,980,000
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	22,230,000	45,850,000	68,500,000	92,700,000
5	**Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ**	4,700,000	4,840,000	4,400,000	2,970,000
6	**Հողերի օգտագործում և պահպանություն**	5,360,000	5,910,000	9,890,000	11,980,000
7	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	8,130,000	5,550,000	6,110,000	8,850,000
8	**Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում**	16,360,000	17,550,000	21,730,000	19,070,000
9	**Պետական փորձաքննություն**	3,520,000	4,980,000	31,600,000	45,100,000
10	**Վերահսկողության արդյունքում տրված պարտադիր հանձնարարականի չկատարում**	550,000	950,000	1,800,000	2,800,000
ԸՆԴԱՄԵՆԸ		**99,160,000**	**135,750,000**	**205,590,000**	**248,750,000**

Գծապատկեր 3



Գծապատկեր 3.1



Համաձայն այդ տվյալների 2025 թվականի ընթացքում նշանակված տուգանքի չափը 2024 թվականի համեմատությամբ աճել է 20,9%, 2023 թվականի համեմատությամբ՝ 83,2%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 150,8%:

Վերահսկողական աշխատանքների արդյունքում հաշվարկվել է **34,297,316,295** ՀՀ դրամ գումարի չափով պատճառված վնաս, որից՝

- շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկ՝ 7,928,270,508 ՀՀ դրամ վնաս (ստուգումներով՝ 1,369,684,618 ՀՀ դրամ), որից 390,651,000 ՀՀ դրամ շրջակա միջավայրին պատճառված վնասը ՇՄՆ հաշվարկվել է Էկոպարեկային ծառայության կողմից
- պետությանը պատճառված՝ 26,369,045,787 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Նախորդ երեք տարվա համեմատականը ըստ առավել ռիսկային ուղղությունների ներկայացված է *Աղյուսակ 9-ում և 10-ում*:

Աղյուսակ 9

ԲԸՏՄ կողմից հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկի քանակի համեմատականը նախորդ երեք տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների					
Հ/Հ	***Ուղղությունները***	***2022***	***2023***	***2024***	***2025***
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	696	1,143	990	1,137
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	99	106	118	97
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	45	51	69	63
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	26	33	70	64
5	**Հողերի օգտագործում և պահպանություն**	82	144	241	385
ԸՆԴԱՄԵՆԸ		**948**	**1,477**	**1,488**	**1,746**

Աղյուսակ 10

ԲԸՏՄ կողմից հաշվարկված շրջակա միջավայրին և պետությանը պատճառված վնասի համեմատականը նախորդ երեք տարիների հետ՝ ըստ վերահսկողական ուղղությունների					
Հ/Հ	*Ուղղությունները*	*2022*	*2023*	*2024*	*2025*
1	**Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն**	893,690,284	1,249,854,084	1,117,046,776	1,282,535,238
2	**Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն**	19,823,560	23,530,349	19,167,696	16,030,221
3	**Մթնոլորտային օդի պահպանություն**	198,171,172	180,863,753	2,354,528,016	160,881,709
4	**Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն**	94,974,272	1,638,276,029	431,159,194	1,154,377,275
5	**Հողերի օգտագործում և պահպանություն**	61,361,290	282,739,700	2,355,814,717	5,314,446,065
6	**Ընդերքօգտագործում և պահպանություն**	961,178,695	1,800,918,616	1,691,540,200	26,369,045,787
ԸՆԴԱՄԵՆԸ		**2,229,199,273**	**5,176,182,531**	**7,969,256,599**	**34,297,316,295**

Համաձայն այդ տվյալների 2025 թվականի ընթացքում հաշվարկված վնասի գումարի չափը 2024 թվականի համեմատությամբ աճել է 330,4%, 2023 թվականի համեմատությամբ՝ 562,6% իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 1438,5%:

Գծապատկեր 4



Գծապատկեր 4.1



ՀՀ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողական աշխատանքների արդյունքում իրավապահ մարմիններին ուղարկվել է 920 գործի նյութ՝ 3,239,469,641 ՀՀ դրամ շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկով: Նախորդ երեք տարվա տվյալները ներկայացված է *Աղյուսակ 11-ում*:

Աղյուսակ 11

Իրավապահ մարմիններին ուղարկված նյութերի քանակի համեմատականը նախորդ երեք տարիների հետ		
Ժամանակահատվածը	***Քանակը***	***Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը***
2022	661	944,178,108
2023	900	1,314,902,307
2024	684	1,742,769,581
2025	920	3,239,469,641

Համաձայն այս տվյալների 2025 թվականի ընթացքում իրավապահ մարմիններին ուղարկված գործերի քանակը 2024 թվականի համեմատությամբ աճել է 34,5%, 2023 թվականի համեմատությամբ՝ 2,2%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 39,1%, իսկ 2025 թվականի ընթացքում շրջակա միջավայրին հասցված վնասի չափը 2024 թվականի համեմատությամբ աճել է 85,8%, 2023 թվականի համեմատությամբ՝ 146,3%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 243,0%:

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐ

- 2022 թվականի ընթացքում մուտքագրվել է 314,561,597.8 ՀՀ դրամ
- 2023 թվականի ընթացքում մուտքագրվել է 143,868,695.2 ՀՀ դրամ
- 2024 թվականին ընթացքում մուտքագրվել է 242,528,389.6 ՀՀ դրամ
- 2025 թվականին ընթացքում մուտքագրվել է 338,552,651.5 ՀՀ դրամ

2025 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի մուտքերը 2024 թվականի համեմատությամբ աճել է 39,5%, 2023 թվականի համեմատությամբ՝ 135,3%, իսկ 2022 թվականի համեմատությամբ՝ 7,6%: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Աղյուսակ 12

ԲԸՏՄ վարչական ակտերով սահմանված տուգանքներից պետական բյուջեի թիվ 900005024063 հաշվեհամարին կատարված վճարումների համեմատականը								
Ժամանակահատվածը	Ընդհանուր գործեր, որից		ՀԿԱԾ		Վարչական տուգանք		Բնությանը պատճառված վնաս	
	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
2022	1,414	314,561,598	438	24,351,965	747	80,280,000	229	209,929,633
2023	1,632	143,868,695	587	34,729,544	820	76,400,000	225	32,738,106
2024	1,862	242,528,390	722	86,023,348	831	83,900,000	309	72,605,042
2025	2,024	338,552,652	814	103,353,475	935	128,455,000	275	106,744,177

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ուղարկվել 300 որոշում 709,536,669.9 ՀՀ դրամի բռնագանձման պահանջով:

ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ, ՔԱՆԱԿԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՀԻՄՔԵՐԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ստուգումներն իրականացվել են Խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 12-Լ որոշմամբ հաստատված ստուգումների տարեկան ծրագրով, ՀՀ վարչապետի հանձնարարականներով, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների հիմքերով:

ԲԸՏՄ ղեկավարի կողմից 2025 թվականին հրապարակված թվով 410 և 2024 թվականից տեղափոխված թվով 11 հանձնարարագրերով ընդհանուր առմամբ իրականացված 421 ստուգումներից՝

- 394-ն ավարտվել է, 20-ը տեղափոխվել է 2026 թվական, իսկ 7 հանձնարարագիր ուժը կորցրած է ճանաչվել,
- հաշվարկվել է 1,369,684,618 ՀՀ դրամի շրջակա միջավայրի վնաս,
- կազմվել է 336 ակտ և 58 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք,

- տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 124 պարտադիր կատարման հանձնարարական, որից 39-ը կատարվել է:

421 հանձնարարագրով տնտեսավարող սուբյեկտների տնտեսական գործունեության ոլորտները

- ընդերքօգտագործում – 100
- էլեկտրաէներգիայի արտադրություն / ՓՀԷԿ, ՋԷԿ/ - 47
- անտառային տնտեսություններ, բնության հատուկ պահպանվող տարածք – 12
- ձկնաբուծություն – 24
- արտադրություն – 98
- ջրօգատագործում – 61
- թափոնների տեղադրում և ոչնչացում – 22
- շինարարություն – 19
- հասարակական սննդի, հյուրանոցների, զվարճությունների և հանգստի կազմակերպում – 6
- անասնաբուծություն – 8
- հողերի օգտագործում, պահպանություն – 17
- պետության կառավարում և հասարակության սոցիալ-տնտեսական քաղաքականություն – 5
- սպասարկում /ավտոսպասարկում, գազալցակայան/ - 2

Աղյուսակ 13

Ընդհանուր ստուգումների կատարողականի համեմատականը նախորդ երեք տարիների հետ				
	2022	*2023*	*2024*	*2025*
Հանձնարարագրերի քանակը, որից	**267**	**292**	**399**	**421**
նախորդ տարվանից տեղափոխված	16	20	13	11
հաշվետու ժամանակահատվածում հրապարակված	251	272	386	410
Հանձնարարագրերի կատարողական, որից	**267**	**292**	**399**	**421**
ուժը կորցրած	6	5	9	7
ավարտված ստուգումներ	241	274	379	394
հաջորդ տարի տեղափոխված	20	13	11	20

Գծապատկեր 5



Աղյուսակ 14

Տարեթիվ	*Շրջակա միջավայրին պատճառված վնասի չափը ՀՀ դրամ*	*Տրված հանձնարարակների քանակը*	*Կատարված հանձնարարականների քանակը*
2022	453,300,104	117	63
2023	1,864,802,177	128	64
2024	2,949,986,799	107	52
2025	1,369,684,618	124	39

Ստուգումների շրջանակը

Ռիսկերի վրա հիմնված մեթոդաբանությամբ 2025 թվականին թիրախավորվել է տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

- ✓ ընդերքօգտագործում
- ✓ անտառային տնտեսություն և հատուկ պահպանվող տարածք
- ✓ շինարարություն
- ✓ ձկնաբուծություն
- ✓ ջրօգտագործում և ջրահեռացում
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում
- ✓ արտադրություն
- ✓ պետության կառավարում և հասարակության սոցիալ-տնտեսական քաղաքականություն
- ✓ անասնաբուծություն, բուսաբուծություն
- ✓ հասարակական սննդի, հյուրանոցների, զվարճությունների և հանգստի կազմակերպում

Տարեկան ծրագրով նախատեսված 200 ստուգում իրականացնելու հանձնարարագրերը հրապարակվել են (կատարողականը՝ 100%), *որից 189-ն ավարտվել է, 10-ը տեղափոխվել է 2026 թվական, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել:*

Արդյունքում կազմվել է 164 ակտ և 25 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 73 պարտադիր կատարման հանձնարարական, որից 29-ը կատարվել է:

Հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված վնաս 1,048,227,074 ՀՀ դրամի չափով:

Ստուգումների տարեկան ծրագրով պլանավորվել էր իրականացնել 200 ստուգում (բարձր 140, միջին 55, ցածր 5): Ավարտված 189 տնտեսավարող սուբյեկտների ստուգումից առաջ և հետո առկա է ռիսկայնության գնահատման հետևյալ պատկերը համաձայն *Աղյուսակ 15-ի*

Աղյուսակ 15

Ռիսկայնության աստիճան	Ստուգումից առաջ	Ստուգումից հետո*
բարձր	131	84
միջին	54	100
ցածր	4	5

**Տարեկան ծրագրով իրականացված ստուգումների արդյունքում տրված պարտադիր կատարման թվով 73 հանձնարարականներից 44-ը գտնվում են ժամկետի մեջ, դրանից կախված՝ հնարավոր է ռիսկի աստիճանի փոփոխություն:*

Աղյուսակ 16

Ստուգումների տարեկան ծրագրի կատարողականի համեմատականը՝ նախորդ երեք տարիների հետ				
	2022	*2023*	*2024*	*2025*
Տարեկան ծրագրով ստուգումների քանակը	130	155	180	200
հրապարակված հանձնարարագրեր, որից	129	155	180	200
ավարտված	122	146	174	189
ուժը կորցրած	1	3	3	1
հաջորդ տարի տեղափոխված	6	6	3	10

2025 թվականի արտածրագրային 221 ստուգումից

2025 թվականին արտածրագրային ստուգումներ իրականացնելու նպատակով հրապարակվել է թվով 210 հանձնարարագիր, *որից 133-ը առանձնահատուկ դեպքերով՝ համաձայն «Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի»*:

2024 թվականից տեղափոխվել էր թվով 11 արտածրագրային ստուգումներ իրականացնելու նպատակով հրապարակված հանձնարարագիր:

2025 թվականի արտածրագրային 221 ստուգումներից ավարտվել է 205-ը, 10-ը տեղափոխվել է 2026 թվական, 6 հանձնարարագիր ուժը կորցրած է ճանաչվել:

Արդյունքում կազմվել է 172 ակտ և 33 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք: Տրվել է խախտումները վերացնելու նպատակով թվով 51 պարտադիր կատարման հանձնարարական, որից 10-ը կատարվել է:

Հաշվարկվել է վնաս 26,690,503,331 ՀՀ դրամի չափով, որից՝

- շրջակա միջավայրին՝ 321,457,544 ՀՀ դրամ
- պետությանը պատճառված՝ 26,369,045,787 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից)

Աղյուսակ 17

Արտածրագրային ստուգումների կատարողականի համեմատականը՝ նախորդ երեք տարիների հետ				
	2022	*2023*	*2024*	*2025*
Արտածրագրային ստուգումների քանակը	138	137	219	221
ավարտված	119	128	205	205
հաջորդ տարի տեղափոխված	14	7	8	10
ուժը կորցրած	5	2	6	6

221 հանձնարարագրերի հրապարակման հիմքերը

- 2024 թվականից տեղափոխված տարեկան ծրագրով - 3 ստուգում, որոնք ավարտվել են,
- Իրավապահ մարմիններից ստացված գրություններով - 52 ստուգում, որից 45-ը ավարտվել է, 7-ը տեղափոխվել է 2026թ.,
- ՀՀ նախարարարություններից ստացված գրություններով - 1 ստուգում, որն ավարտված է,
- Պետական եկամուտների կոմիտեից ստացված գրություններով - 7 ստուգում, որոնք ավարտվել են,
- Քաղաքացիներից ստացված բողոք-դիմումներով - 33 ստուգում, որից ավարտվել է 32-ը, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- Տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրություններով - 8 ստուգում, որոնք ավարտվել են,

- ԲԸՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրված խախտումները վերացնելու մասին հանձնարարականների կատարման հիմքով - 9 ստուգում, որոնք ավարտվել են,
- Պետական վերահսկողական ծառայությունից ստացված գրություններով - 12 ստուգում, որոնք ավարտվել են,
- Ազգային ժողովից ստացված գրություններով - 3 ստուգում, որոնք ավարտվել են,
- Էկոպարեկային ծառայությունից ստացված գրություններով - 12 ստուգում, որից ավարտվել է 10-ը, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել, 1-ը տեղափոխվել է 2026թ.,
- Լիազոր մարմիններից ստացված գրություններով - 72 ստուգում, որից ավարտվել է 67-ը, 3-ը ուժը կորցրած է ճանաչվել, 2-ը տեղափոխվել է 2026թ.,
- Տնտեսավարող ընկերություններից ստացված գրություններով - 4 ստուգում, որոնք ավարտվել են,
- ԲԸՏՄ նախաձեռնությամբ - 5 ստուգում, որից ավարտվել է 4-ը, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել:

2021 թվականի հոկտեմբերի 17-ից ԲԸՏՄ «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 29.1 հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում իրավունք է ձեռք բերել իրականացվող ստուգումների կամ դիտարկումների շրջանակներում անհապաղ կասեցնել բնապահպանական օրենսդրության խախտումներով իրականացվող տնտեսավարող սուբյեկտների գործողությունները կամ գործունեությունը: Իրականացված ստուգումների կամ դիտարկումների շրջանակներում կիրառված կասեցումների քանակը նախորդ տարիների համեմատականով ներկայացված է *Աղյուսակ 18-ում*:

Աղյուսակ 18

Ստուգումների արդյունքներով կասեցված գործունեության/գործողության վերաբերյալ 2022-2025 թվականների համեմատականը								
Ուղղություններ	*Գործունեության/ գործողության կասեցում*				*Կասեցման վերացում*			
	2022	*2023*	*2024*	*2025*	*2022*	*2023*	*2024*	*2025*
Մթնոլորտային օդի պահպանություն	13	10	17	15	9	6	5	8
Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն	12	33	80	73	2	4	11	5
Ընդերքօգտագործում և պահպանություն	1	2	0	0	0	0	0	0
Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ	0	1	1	0	0	0	0	0
ՇՄԱԳ	0	0	4	6	0	0	0	1
Ընդամենը	26	46	102	94	11	10	16	14

ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում վերհանվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները, մասնավորապես՝

- ՀՀ Ջրային օրենսգրքի 21-րդ, 27-րդ հոդվածներ,
- ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ և 110-րդ հոդվածներ,
- Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքի 9-րդ, 13-րդ, 15-րդ, 21-րդ հոդվածներ,
- ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 46-րդ, 59-րդ, 65-րդ, 78-րդ հոդվածներ,
- Թափոնների մասին ՀՀ օրենք 12-րդ, 13-րդ հոդվածներ,
- ՀՀ Հարկային օրենսգրքի 166-րդ, 167-րդ, 168-րդ, 169-րդ, 170-րդ, 203-րդ, 204-րդ, 205-րդ, 212-րդ հոդվածներ:

Աղյուսակ 19

Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները՝ իրականացված ստուգումներով	2022	2023	2024	2025
ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք	142	237	286	296
ՀՀ Ջրային օրենսգիրք	58	96	127	169
ՀՀ Հողային օրենսգիրք	69	86	124	237
ՀՀ Հարկային օրենսգիրք	167	310	232	272
ՀՀ Անտառային օրենսգիրք	15	19	26	46
Թափոնների մասին ՀՀ օրենք	128	197	140	120
Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք	97	152	158	159
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք	36	27	45	66
Պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենք	53	122	163	157
Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենք	6	5	3	1
Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք	0	13	13	8
Լիցենզավորման մասին ՀՀ օրենք	32	62	30	21
Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք	20	11	64	18
Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք	22	17	3	5
Ընդամենը	**845**	**1,354**	**1,414**	**1,575**

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԲԸՏՄ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նշված ժամանակահատվածում ԲԸՏՄ ղեկավարի կողմից հրապարակվել է դիտարկում իրականացնելու մասին թվով 63 հրաման՝ ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն ոլորտում, որից

- 10 - ավտոլվացման կետ,
- 6 - արտադրական գործունեություն,
- 1- ձկնաբուծություն,
- 1- շինարարություն,
- 34 - ջրօգտագործում /խորքային հոր/,
- 1 - համայնքապետարան,
- 1- ընդերքօգտագործում /մթնոլորտ/,
- 9 - հանրային սննդի սպասարկում:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է 62 դիտարկում, 1 դիտարկման հրաման ուժը կորցրած է ճանաչվել:

Կայացվել է տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը կասեցնելու մասին՝ 44 որոշում *(կասեցումների մասին տեղեկատվությունը ընդգրկված է Աղյուսակ 18-ում)*, 7 նախազգուշացում, ինչպես նաև տրվել է խախտումները վերացնելու վերաբերյալ թվով 2 հանձնարարական:

10 տնտեսավարող սուբյեկտների մոտ բնապահպանական օրենսդրության խախտումներ չեն արձանագրվել:

Աղյուսակ 20

Իրականացված դիտարկումների ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ			
Ժամանակահատված	*Քանակ*	*Չեն հայտնաբերվել խախտումներ*	*Հայտնաբերված խախտումներ*
2022	-	-	-
2023	16	4	12
2024	37	16	21
2025	63	10	52

1. ***ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ***

Իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքում

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	**քանակ/գումար**
արձանագրված իրավախախտում	**1,264**
կայացվել է վարչական տույժի որոշում	**293**
նշանակվել է վարչական տուգանք	**30,300,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**1,234**
հաշվարկվել է պատճառված վնաս	**1,298,565,459** *դրամ*
առգրավված զենքեր	**13** *հատ*

1.1. Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն

ՀՀ անտառների կառավարումն իրականացվում է Շրջակա միջավայրի նախարարության կողմից՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 17 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի և Բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) պահպանությունն իրականացնող 6 ՊՈԱԿ-ների միջոցով:

ՀՀ հողային ֆոնդի հաշվեկշռով անտառային հողերը կազմում են 334,001 հա, իսկ հատուկ պահպանվող տարածքները 335,470 հա տարածք:

2024 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Էկոպարեկային ծառայության» մասին ՀՀ օրենքը, որպես պետական ծառայության առանձին տեսակ, որն իրականացնում է պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության խախտումների հայտնաբերման, կանխման, կանխարգելման և պահպանության ապահովումը: Նույն օրենքի եզրափակիչ մասի և անցումային դրույթների համաձայն էկոպարեկային ծառայողները Օրենքով իրենց վերապահված լիազորություններն իրականացնելու են սահմանված կարգով մրցույթի արդյունքով պաշտոնի նշանակվելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 1-ը:

Իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում՝

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**1,066**
կայացվել է վարչական տույժի որոշում	**179**
նշանակվել է վարչական տուգանք	**18,430,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**1,137**
իրականացվել է թվով 17,922 ծառի վնասի հաշվարկ	**1,050,084,414** *դրամ*
իրականացվել է 4,255.2 խմ փայտանյութի վնասի հաշվարկ	**118,995,196** *դրամ*

Իրականացված ստուգումներ

2025 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների ընթացքում ԲԸՏՄ ստուգում է իրականացրել՝

- *«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում /ծրագրային/ 79,038.8 հա*
- *«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում /իրավապահից գրություն/ 33,765 հա*

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի՝

- *Նոյեմբերյանի /ծրագրային, իրավապահից գրություն/ 29,550 հա*
- *Ջիլիզայի /իրավապահից գրություն/ 19,454 հա*

- *Ստեփանավանի /իրավապահից գրություն/ 6,665 հա*
- *Հրազդանի /իրավապահից գրություն/ 23,238 հա*
- *Իջևանի /իրավապահից գրություն/ 25,512 հա*
- *Սիսիանի /ծրագրային/ 5,420 հա մասնաճյուղերում*

Իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել և արձանագրվել են թվով 1,373 ապօրինի հատված ծառ և անտառային օրենսդրության խախտումներ, որի համաձայն հաշվարկվել է բուսական աշխարհին պատճառված վնաս՝ 100,802,923 ՀՀ դրամի չափով:

Ստուգման արդյունքներով առերևույթ հանցագործության հատկանիշներով հաղորդումներ են ներկայացվել իրավապահ մարմիններին, որոնց համաձայն նախաձեռնվել են քրեական վարույթներ:

Միաժամանակ ստուգման արդյունքները տրամադրվել է նաև Լիազոր մարմնին՝ Շրջակա միջավայրի նախարարությանը:

Ստուգումներով արձանագրված խախտումների պատկերը հետևյալն է.

1. *Ջիլիզայի անտառտնտեսություն* մասնաճյուղում 2025 թվականի փետրվարի 17-ից մինչև հունիսի 13-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- 140.37 խմ ծավալով փայտանյութի դուրսբերում՝ կարգի խախտմամբ, հաշվարկվել է 5,438,144 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս,
- թվով 24 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 3,981,000 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս:

Նյութերն ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

2. *Հրազդանի անտառտնտեսություն* մասնաճյուղում 2025 թվականի հունիսի 12-ից 13-ը իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- 499,94 մ^2 մակերեսներով ապօրինի շինություններ, հաշվարկվել է 2,499,000 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս:

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

3. *Նոյեմբերյանի անտառտնտեսություն* մասնաճյուղում */29,550 հա/* 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 4-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել են.

- Չեն պահպանվել հակահրդեհային կանոնները՝ շահագործված հատատեղերում ավարտական աշխատանքներից հետո ջախի և ճյուղերի մնացորդները դուրս չեն բերվել հատատեղերից,
- Մասնաճյուղի և ֆիզիկական անձանց միջև կնքվել են արոտների և խոտհարքների վարձակալական հողօգտագործման պայմանագրեր՝ անտառշինական նախագծերով և տաքսացիոն գրքերով սահմանված հողատեսքերին անհամապատասխան, հաշվարկվել է 343,500 ՀՀ դրամ վնաս,
- Թվով 236 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 25,432,500 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս,
- 1,156 մ^2 մակերեսով ցանկապատված տարածք (հողազավթում), որի մեջ կառուցված է երկու շինություն՝ 68,4 մ^2 մակերեսով, հաշվարկվել է 365,120 ՀՀ դրամ բուսական աշխարհին և հողային ռեսուրսներին պատճառված վնաս,
- 4,995 մ^2 և 401 մ^2 մակերեսով տարածքներից տեղահանվել է 16,912 մ^3 ծավալի բազալտախճային լեռնային զանգված և ապօրինի դուրս է բերվել 749.25 մ^3 ծավալի անտառային հող, հաշվարկվել է 7,505,890 ՀՀ դրամ բուսական աշխարհին և հողային ռեսուրսներին պատճառված վնաս:

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

4. *Ստեփանավանի անտառտնտեսություն* մասնաճյուղում 2025 թվականի սեպտեմբերի 8-ից 12-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- Թվով 318 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 4,053,000 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս:

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

5. *Իջևանի անտառտնտեսություն* մասնաճյուղում 2025 թվականի հուլիսի 18-ից 29-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- Թվով 693 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 43,084,000 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս:

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

6. *Սիսիանի անտառտնտեսություն* մասնաճյուղում /*5,420 հա*/ 2025 թվականի սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 13-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- Կառուցվել է ոռոգման ջրագիծ՝ առանց համապատասխան նախագծերի, բնապահպանական փորձաքննության դրական եզրակացության և Լիազոր մարմնի համաձայնության,
- Իրականացվել է այլ տեսակի հատում, որը նախատեսված չի եղել անտառշինական նախագծով, ինչի արդյունքում ապօրինի հատվել է թվով 34 ծառ, հաշվարկվել է 828,000 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս,
- Կառուցվել է թվով 2 ջերմոցներ առանց շինթույլտվությունների և պետական գրանցման, ինչպես նաև ներառված չեն անտառշինական նախագծում,
- Մասնաճյուղի և ֆիզիկական անձանց միջև կնքվել են արոտների և խոտհարքների վարձակալական հողօգտագործման պայմանագրեր՝ անտառշինական նախագծերով և տաքսացիոն գրքերով սահմանված հողատեսքերին անհամապատասխան, հաշվարկվել է 230,000 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս,
- 4,121 մ^2 մակերեսով տարածքից տեղահանվել է 9,126 մ^3 ծավալի բազալտախճային լեռնային զանգված,
- Թվով 9 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 373,500 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս,
- Կառուցված է 173,265 մ^2 մակերեսներով շինություններ (տաղավարներ)՝ առանց համապատասխան կառուցապատման նախագծերի, շինթույլտվությունների, ինչպես նաև Լիազոր մարմնի համաձայնության, հաշվարկվել է 926,769 ՀՀ դրամ բուսական աշխարհին և հողային ռեսուրսներին պատճառված վնաս:

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

7. *«Զանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ում /79,038.8 հա/* 2025 թվականի հոկտեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում իրականացված ստուգմամբ արձանագրվել է.

- Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանը հաստատված (գործող) չէ,

- Թվով 59 ապօրինի հատված ծառ, հաշվարկվել է 5,742,500 ՀՀ դրամ բուսական աշխարհին պատճառված վնաս,

Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

8. *«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում* 2025 թվականի դեկտեմբերի 24-ին սկսված ստուգման ընթացքը կասեցվել է:

Առավել հաճախ արձանագրված խախտումները

Հայտնաբերվել են ՀՀ անտառային օրենսգրքի, Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքի պահանջների խախտումներ, մասնավորապես՝

- չեն ապահովվել անտառկառավարման պլանով հաստատված՝ անտառօգտագործման, անտառվերականգնման և անտառպատման կարգը,
- որոշ ՊՈԱԿ-ներում հաստատված չեն անտառկառավարման պլանները,
- անտառներում չեն պահպանվել հակահրդեհային անվտանգության կանոնները,
- իրականացվել է կառուցապատում առանց սահմանված նախագծերի համաձայնեցման և շրջակա միջավայրի ազդեցության դրական փորձաքննության և շինարարության թույլտվության,
- անտառային հողերում ապօրինի հատվել են ծառեր,
- դուրս է բերվել անտառային հող և բազալտախճային լեռնային զանգված:

Իրականացված կանխարգելիչ միջոցառումներ

Համաձայն ԲԸՏՄ 2025 թվականի Ծրագրի՝ իրականացվել են ապօրինի ծառահատման և ապօրինի ձեռքբերված փայտանյութի տեղափոխման դեմ անցկացվող միջոցառումներ (ստուգայցեր, շրջայցեր):

Ապօրինի ծառահատման և ապօրինի ձեռք բերված փայտանյութի տեղափոխման դեմ անցկացվող միջոցառումների շրջանակում ստուգայցերի իրականացման արդյունքում հայտնաբերվել է փայտանյութով բեռնված մեքենա, որը տեղափոխվել է ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ բաժին՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

(02.05.2025թ.№Կ 390-Ա, 11.08.2025թ.№Կ681-Ա)

Միջոցառման ընթացքում կիրառվել են նաև անօդաչու թռչող սարքեր՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և ԲՀՊՏ անտառածածկ տարածքները դիտարկելու նպատակով:

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն

ԲԸՏՄ վերահսկողական և կանխարգելիչ միջոցառումների չորս տարիների արդյունքներով իրավիճակն արտացոլող աղյուսակի տվյալների վերլուծությունից նկատվում է հայտնաբերված ապօրինի ծառահատումների թվի նվազեցում, որը պայմանավորված է անտառտնտեսություններում տարեկան ստուգումների ծրագրով և/կամ իրավապահ մարմինների որոշումներով մասամբ իրականացված ստուգումներով, սակայն 2025 թվականին էկոպարեկային ծառայության կազմավորմամբ և պարեկային ծառայությունը բոլոր անտառտնտեսություններում իրականացմամբ էական ազդեցություն ունեն անտառների պահպանման և էկոլոգիական հիմնախնդիրների լուծման համար, որով պայմանավորված 2025 թվականին ավելացել է ապօրինի ծառահատումների հայտնաբերման քանակը:

Ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման դեպքերը նախորդ տարիների համեմատ հետևյալն է՝ համաձայն *Աղյուսակ 21-ի*

Աղյուսակ 21

Ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխում					
ժամանակահատվածը	**Հատված ծառերի քանակը /հատ/**	**Ձեռքբերված փայտանյութի ծավալը /խմ/**	**Տուգանված անձանց թիվը**	**Վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)**	**Բնությանը պատճառված վնասի գումարի չափը (ՀՀ դրամ)**
2022 թվական	**18,405**	**1,232**	**218**	**22,340,000**	**893,690,284**
2023 թվական	**14,374**	**2,248**	**189**	**19,210,000**	**1,249,854,084**
2024 թվական	**13,013**	**3,778. 5**	**177**	**18,550,000**	**1,113,590,876**
2025 թվական	**17,922**	**4,255.2**	**136**	**14,670,000**	**1,169,079,610**

Ապօրինի ծառահատումների քանակային վերլուծությունը ցույց է տալիս, որ առավել խնդրահարույց են ՀՀ Տավուշի և Լոռու մարզերը:

Աղյուսակ 22

Ապօրինի ծառահատումների քանակը/հատ՝ ըստ խնդրահարույց մարզերի		
ժամանակահատվածը	**Տավուշի մարզ**	**Լոռու մարզ**
2022	**4,217**	**5,620**
2023	**6,076**	**6,555**
2024	**5,181**	**6,377**
2025	**8,806**	**3,997**

1.2. Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն

Իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում՝

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**198**
կայացվել է վարչական տույժի որոշում	**114**
նշանակվել է վարչական տուգանք	**11,870,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**97**
հաշվարկվել է պատճառված վնաս	**16,030,221** *դրամ*
առգրավված զենքեր	**13** *հատ*

Իրականացված կանխարգելիչ գործողություններ

Համաձայն ԲԸՏՄ 2025 թվականի տարեկան գործունեության ծրագրի՝ իրականացվել են տափաստանային արտույտի սեզոնային միգրացիայի ընթացքում ապօրինի որսի կանխարգելման և որսի թույլտվության ժամանակահատվածում ապօրինի որսորդության դեմ ուժեղացված միջոցառումներ, որոնց արդյունքում առգրավվել է 4 հատ որսորդական զենք և որսված կենդանիներ:

(25.02.2025թ.№Կ 112-Ա, 11.08.2025թ.№Կ681-Ա)

Վայրի կենդանիների առգրավում, հայտնաբերում, պահման պայմանների խախտում, ապօրինի որս և ձկնորսություն

- արձանագրվել է 194 վայրի կենդանու ապօրինի որս՝ 13 հատ թխակապույտ աղավնի, 74 հատ մոխրագույն կաքավ, 2 հատ քարակաքավ, 90 հատ տափաստանային արտույտ, 11 հատ նապաստակ, 1 հատ սև փարփար, 1 հատ կաչաղակ, 1 հատ վայրի խոզ, 1 հատ կովկասյան ազնվացեղ եղջերու /ՀՀ Կարմիր գիրք/,
- արձանագրվել է 84 վայրի կենդանու պահման պայմանների խախտում՝ 7 հատ անդրկովկասյան գորշ արջ /ՀՀ Կարմիր գիրք/, 4 հատ մակակա կապիկ, 2 հատ Callitrix

տեսակի կապիկ, 2 հատ այծյամ, 1 հատ բեզոարյան այծ / ՀՀ Կարմիր գիրք /, 1 հատ գայլ, 2 հատ սիրամարգ տեսակի թռչուն, 1 հատ օձ, 62 հատ եղնիկ, 1 հատ բվիկ, 1 հատ ճուռակ,

- հայտնաբերվել է 6 հատ վայրի կենդանի՝ 3 հատ վնասված թռչուն՝ 1 հատ սապսան /ՀՀ Կարմիր գիրք/, 1 հատ մեծ ենթարծիվ /ՀՀ Կարմիր գիրք/ և 1 հատ ճուռակ, ինչպես նաև թակարդում հայտնված 1 հատ արջի քոթոթ /ՀՀ Կարմիր գիրք/, 1 հատ անկած այծյամ, 1 հատ հյուծված լուսանի ձագ,
- արձանագրված ապօրինի ձկնորսության 75 դեպքով առգրավվել է 2,647.61 կգ սիգ և այլ տեսակի ձկներ և 2 դեպքով՝ 68 հատ կարմրախայտ,
- առգրավվել է 65.48 կգ խեցգետին,
- ի պահ է վերցվել 21 հատ լողամիջոց, 248 հատ ձկնորսական ցանց, 13 միավոր որսորդական զենք, 22 հատ փամփուշտ, 4 հատ ինքնաշեն մետաղական օղակ:

ԲԸՏՄ ղեկավարի 2025 թվականի հունիսի 27-ի Ն 5-Լ հրամանի համաձայն՝ անազատ և կիսաազատ պայմաններում պահվող կենդանիների պահման պայմանների և թույլտվությունների իրավական հիմքերի ստուգման և համապատասխան աշխատանքներ իրականացնելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ (այսուհետ՝ Խումբ):

«Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ (COP17) համաժողովի կազմակերպմանն ընդառաջ՝ Խմբի կողմից իրականացված վերահսկողական գործառույթների հիման վրա ֆիզիկական և իրավաբանական անձանց մոտ իրականացվել են անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների պահման պայմանների և թույլտվությունների իրավական հիմքերի ստուգման համապատասխան աշխատանքներ, որի արդյունքում հաշվարկվել է 56 տեսակի 281 հատ վայրի կենդանի:

Անազատության մեջ պահվող 8 հատ ՀՀ Կարմիր գրքում գրանցված «Անդրկովկասյան գորշ արջերը», ինչպես նաև ՀՀ ՊՆ զինծառայողի կողմից և Աչաջուր համայնքում հայտնաբերված 2 հատ գորշ արջի քոթոթները տեղափոխվել են «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ի Ուրցաձորի կենտրոն:

Ռիսկերի առկա իրավիճակի վերլուծություն

Վերահսկողության արդյունքներով բարձր ռիսկային են ապօրինի որսի և սիգի ձվադրման ժամանակահատվածի հետ կապված ձկնորսության խնդիրները:

Աղյուսակ 23

Հայտնաբերված և առգրավված վայրի կենդանիների քանակը				
Ժամանակահատվածը	**Հայտնաբերված և առգրավված վայրի կենդանիների քանակը /հատ/**	**Վարչական տույժերի քանակը**	**Վարչական տուգանքի չափը /ՀՀ դրամ/**	**Բնությանը պատճառված վնասի գումարի չափը /ՀՀ դրամ/**
2022	**194**	**27**	**2,920,000**	**19,823,560**
2023	**140**	**42**	**3,570,000**	**23,530,349**
2024	**62**	**18**	**850,000**	**982,000**
2025	**284**	**36**	**3,980,000**	**7,092,240**

Սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացված միջոցառումներ

«Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածում իրականացվող համատեղ միջոցառումներ» ծրագրի շրջանակում 2025 թվականի նոյեմբերի 21-ից մինչև 2026 թվականի փետրվարի 1-ը ՀՀ ՆԳՆ, ՇՄՆ էկոպարեկային ծառայության, ՏԻՄ մարմինների, ՍԱՏՄ-ի և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ վերահսկողական ուժեղացված միջոցառումներ են իրականացվել Սևանա լճում և հարակից տարածքներում,ինչպես նաև ՀՀ բոլոր մարզերում, որոնց ընթացքում կիրառվել են *գիշերային տեսանելիության և ջերմատեսիլ*, ինչպես նաև *անօդաչու թռչող սարքեր*:

Միջոցառման ընթացքում ուժեղացված վերահսկողություն է իրականացվել նաև Երևան քաղաքի և մարզերի ձկան վաճառքի կետերում:

Միջոցառման ընթացքում արձանագրված 57 դեպքերով հարուցվել է 47 վարչական վարույթ (գործերի քննությունները ընթացքի մեջ են), ինչպես նաև առերևույթ հանցագործության հատկանիշներով ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ Սևանի և Ճամբարակի բաժինների կողմից հաղորդումներ են ներկայացվել նախաքննական մարմին, որի արդյունքում նախաձեռնվել է թվով 10 քրեական վարույթ:

Իրականացված միջոցառման ընթացքում արդյունքները հետևյալն են՝

- առգրավված սիգ ձկնատեսակ՝ 2,210.835 կգ,
- առգրավված սիգի ձկնկիթ՝ 17.75 կգ

- պատճառված վնասի հատուցման չափը՝ 3,927,990 ՀՀ դրամ
- լողամիջոց՝ 25 հատ
- ձկնորսական ցանց՝ 298 հատ
- քարշակ ՝ 5 հատ
- լողամիջոցի շարժիչ՝ 1 հատ

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

- Առաջարկվել է «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին» ՀՀ օրենքում մտցնել խստացումներ, մասնավորապես հոդված 21.1-ի 16-րդ կետում կատարել լրացում՝ «կիրառմամբ» բառից առաջ լրացնել «արգելել ջերմատեսիլ և գիշերային տեսանելիության սարքերի» բառերը:
- Առաջարկվել է վերանայել «Կենդանական աշխարհի օբյեկտների (որսահանդակների) պահպանության, պաշտպանության, օգտագործման կարգը և որսահանդակների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը՝ հստակեցնելով որսահանդակների տարածքները:
- Վերջին տարիներին հաճախակի են դարձել ահազանգերը՝ վայրի կենդանիների բնակավայրեր մտնելու, վնասներ հասցնելու, ինչպես նաև կենդանիների խեղման և վնասման դեպքերը: Այդ ահազանգերը ստանում է ԲԸՏՄ և ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունը:
- Բնակավայրերում քաղաքացիներին աջակցելու, մրգատու այգիներին, գյուղատնտեսական կենդանիներին, մեղվաընտանիքներին հասցվող վնասի փոխհատուցման նպատակով առաջարկվում է ներդնել ապահովագրական համակարգ:
- Շրջակա միջավայրի նախարարության, Վայրի բնության հիմնադրամի և շահագրգիռ այլ կառույցների հետ համագործակցությամբ, տեղադրելով վայրի կենդանիների մուտքը բնակավայրեր արգելող համակարգեր, բացառել վայրի կենդանիների (հատկապես արջերի) ապօրինի որսը:
- Առաջարկվել է ստեղծել նոր ծառայություն կամ պայմանագրային հիմունքներով պատվիրակել մասնավոր կազմակերպություններին իրականացնելու՝ խեղված, վնասված կենդանիների, թռչունների փրկությունը և տեղափոխումը վերականգնողական կենտրոններ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը

ԿՎՎ աշխատակիցները կիրառում են նոր ձեռք բերված անօդաչու թռչող սարքեր՝ դրոն և ծրագրային ապահովումներ, ինչպես նաև պլանշետներ, որոնք տեսուչներին թույլ են տալիս անտառածածկ տարածքներում էլեկտրոնային քարտեզների միջոցով ճիշտ կողմնորոշվել, իրավախախտման վայրը կոորդինատների միջոցով ճշգրիտ նշել և իրավախախտման փաստը տեսալուսանկարահանել:

Նոր տեխնոլոգիաների կիրառումը էականորեն կբարձրացնի կենսաբազմազանության ոլորտում վերահսկողության արդյունավետությունը, մասնավորապես՝ անտառածածկ տարածքների և որսահանդակների դիտարկումը անօդաչու թռչող սարքերով կնվազեցնի մարդկային գործոնի ներգրավվածությունը և նյութատեխնիկական միջոցների օգտագործումը:

2. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ, ՋՐԵՐԻ, ՀՈՂԵՐԻ, ՎՏԱՆԳԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2.1. Մթնոլորտային օդի պահպանություն

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**617**
կայացվել է վարչական տույժի որոշում	**399**
նշանակվել է վարչական տուգանք	**34,980,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**63**
հաշվարկվել է պատճառված վնաս	**160,881,709** *դրամ*

Իրականացված ստուգումներ

Մթնոլորտային օդի պահպանության վերահսկողությունը ԲԸՏՄ իրականացնում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվությունների առկայության և այդ թույլտվություններով սահմանված նորմատիվների պահպանումը:

2025 թվականի ընթացքում մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ իրականացված ստուգումներում և/կամ վարչական վարույթներում ընդգրկվել են հետևյալ ոլորտները

- Այրում՝ խոզանների, տերևների, թափոնների, մալուխների, աղբավայրերում ինքնայրում ՝ 244,
- Շինարարություն, արտադրություն՝ 221,
- Առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի տեղափոխում՝ 84,

- Հանքարդյունաբերություն՝ 37,
- Սպասարկում և այլ՝ 31:

Երևան քաղաքում իրականացված վերահսկողության արդյունքներ

2025 թվականին ԲԸՏՄ Երևան քաղաքում մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ արձանագրվել է 217 իրավախախտում՝ ըստ հետևյալ ոլորտների

- Շինարարություն՝ 99,
- Այրում՝ 39,
- Արտադրություն՝ 34,
- Առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի տեղափոխում՝ 15,
- Հանքարդյունաբերություն՝ 15,
- Սպասարկում և այլ՝ 15:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները

- առանց սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվության գործունեություն,
- շինհրապարակներում սահմանված պահանջների խախտում,
- առանց անթափանց ծածկոցի սորուն նյութերի տեղափոխում,
- արտադրության կամ սպառման կամ տերևաթափից առաջացած թափոնների և խոզանների, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքների այրում,
- աղբավայրերի ինքնայրում,
- հանքավայրերում սահմանված պահանջների խախտում:

Կանխարգելիչ միջոցառումներ

1. 2025 թվականի Ծրագրով նախատեսված պարբերականությամբ իրականացվել են ստուգումներ և վարչական վարույթներ, ինչպես նաև փոշու արտանետումները նվազեցնելուն ուղղված շարունակական կանխարգելիչ միջոցառումներ:
2. ՀՀ վարչապետի 2023 թվականի օգոստոսի 7-ի թիվ 817-Ա որոշման հիման վրա՝ ՀՀ անտառային հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաև դրանց

հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով, ԲԸՏՄ ղեկավարի հանձնարարությամբ ՏՄ ղեկավարի տեղակալները ՀՀ բոլոր Մարզպետների և համայնքի ղեկավարների հետ, ինչպես նաև քաղաքացիների հետ իրականացրել են հանդիպումներ իրազեկելով «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների վերաբերյալ, մասնավորապես թափոնների, տերևների, խոզանների, բուսածածկի մնացորդների, աղբավայրերի այրման վտանգների մասին:

3. «Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2025թ. տարեկան գործունեության ծրագրի» կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների 2-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ դպրոցներում էկոկրթական ռազմավարության շրջանակներում անցկացվել են բնագիտության և հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված թեմատիկ զրույց-դասընթացներ:
4. ԲԸՏՄ կողմից կազմակերպվել են իրազեկում-հանդիպումներ Երևան քաղաքում լայնածավալ շինարարական աշխատանքներ իրականացնող, ընդերքօգտագործող կազմակերպությունների և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ կապված փոշու արտանետումները նվազեցնելուն միտված միջոցառումների իրականացման և փոշենստեցնող սարքավորումների լայնածավալ կիրառմանն ուղղված աշխատանքների կատարման հետ:
5. ԲԸՏՄ թափոնների, տերևների, խոզանների, բուսածածկի մնացորդների, աղբավայրերի այրումների վերաբերյալ արձանագրել է 1,224 դեպք (Երևանում՝ 102), որից Թեժ գիծ – 955 (ՆԳՆ փրկարար ծառայությունից – 687), ԲԸՏՄ կողմից նախաձեռնված – 99, այլ մարմիններից (մարզպետարան, համայնքներ) – 170:

Ըստ ՀՀ մարզերի.

- Երևան – 102
- Արագածոտն – 43
- Արարատ – 228
- Արմավիր – 69
- Գեղարքունիք – 69
- Լոռի – 42
- Շիրակ – 77

- Սյունիք – 20
- Վայոց ձոր – 23
- Կոտայք – 482
- Տավուշ – 69

Իրավախախտները ենթարկվել են վարչական տույժի, իսկ իրավախախտներին չհայտնաբերելու դեպքում գործերն ուղարկվել են իրավապահ մարմիններին իրավախախտներին հայտնաբերելու և գործի հետագա ընթացքը որոշելու համար: Հարուցված վարչական վարույթներով պատասխանատվության միջոց է կիրառվել 142 (Երևանում՝ 39) քաղաքացու նկատմամբ՝ 3,300,000 ՀՀ դրամի չափով (Երևանում՝ 400,000 ՀՀ դրամի չափով),

6. Շինարարական հրապարակներում արձանագրվել է իրավախախտման 123 դեպք (Երևանում՝ 95), կայացվել է 91 (Երևանում՝ 65) վարչական տույժ նշանակելու մասին որոշում՝ նշանակվել է 10,150,000 (Երևանում՝ 7,550,000) ՀՀ դրամի չափով վարչական տուգանք,
7. Սորուն նյութերի տեղափոխման նկատմամբ իրականացվող միջոցառումների ընթացքում արձանագրվել է իրավախախտման 84 դեպք (Երևանում՝ 15), կայացվել է 84 (Երևանում՝ 15) վարչական տույժ նշանակելու մասին որոշում՝ նշանակվել է 5,050,000 (Երևանում՝ 750,000) ՀՀ դրամի չափով վարչական տուգանք,
8. Առանց սահմանային թույլատրելի արտանետումների թույլտվության գործունեություն իրականացնելու հետևանքով կայացվել է թվով 15 գործունեությունը/գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշում (Երևանում՝ 4), որից 8-ը կասեցումից հանվել են (Երևանում՝ 4):
9. Աղբավայրերում ինքնայրումներով պայմանավորված թվով 45 միջնորդություն է ուղարկվել ՀՀ մարզպետարաններին իրենց իրավասությունների շրջանակներում աղբավայրի հսկողություն, ինչպես նաև աղբի ինքնայրումը կանխելու համար հակահրդեհային միջոցառումներ չիրականացնելու համար կիրառել պատասխանատվության միջոցներ:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

1. ԲԸՏՄ կողմից շինհրապարակներում փոշենստեցնող (փոշեզսպող) սարքավորումներ տեղադրելու առաջարկություն է ներկայացվել Շրջակա միջավայրի նախարարին, Տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, Քաղաքաշինության կոմիտեի նախագահին և Երևանի քաղաքապետին: Միաժամանակ առաջարկվել է շինարարությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների համար սահմանել պարտադիր պահանջ, որով վերջիններս կպարտավորվեն իրենց գործունեության ընթացքում կիրառել փոշենստեցնող (փոշեզսպող) սարքավորումներ, ինչը կկրճատի կամ կբացառի շինարարական աշխատանքների ժամանակ մթնոլորտային օդ փոշու արտանետումները:

ԲԸՏՄ կողմից առաջարկություն է ներկայացվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ընդերքօգտագործման ոլորտում համապատասխան լիցենզիաների տրամադրման ժամանակ տնտեսավարողների համար սահմանել պարտադիր պահանջ, որով վերջիններս կպարտավորվեն իրենց գործունեության ընթացքում կիրառել փոշենստեցնող (փոշեզսպող) սարքավորումներ, իսկ Շրջակա միջավայրի նախարարությանը առաջարկվել է ՇՄԱԳ փորձաքննություններում, որպես պայման, ներառել փոշենստեցնող (փոշեզսպող) սարքավորումների կիրառումը՝ ինչը կնպաստի մթնոլորտային օդ փոշու արտանետումների կրճատմանը կամ բացառմանը:

Վերը նշված առաջարկությունները ընդգրկվել են ռազմավարության ստանդարտներում, մասնավորապես ՀՀ կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 611-Լ որոշմամբ սահմանվող պահանջներում:

2. ԲԸՏՄ իր լիազորությունների շրջանակներում վերահսկողական գործառույթներ իրականացնելիս բազմիցս առնչվում է փայտածուխի արտադրություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքի արդյունքում առաջացող մի շարք խնդիրների հետ:

Խնդրի լուծման համար ԲԸՏՄ նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում Շրջակա միջավայրի նախարության, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ներկայացուցիչների հետ: Քննարկման արդյունքում առաջարկվել է փայտածուխի արտադրություն իրականացնող կազմակերպությունների գործունեությունն ընդգրկել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկում, իսկ որպես արտադրական վտանգավոր օբյեկտ՝

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում:

Վերը նշված առաջարկությունների հիման վրա Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին է տրամադրվել փայտածուխի արտադրություն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով և նորմատիվ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ իրականացնելու համար:

3. Երևան քաղաքում վերահսկողության գործառույթներ իրականացնելիս պարզվել է, որ շինարարական նյութերի վաճառակետերում սորուն նյութերը՝ ավազ, խիճ և այլն, գտնվում են բացօդյա տարածքում, որը ևս հանգեցնում է փոշու արտանետումներով օդի աղտոտվածության բարձրացմանը: Վերոգրյալը նկատի ունենալով շինարարական նյութերի վաճառակետերի հասցեների ցանկով գրություն է ուղարկվել Երևանի քաղաքապետարան՝ նշված աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները կանխարգելելու նպատակով հսկողությունը խստացնելու նպատակով:

4. ՀՀ փողոցների ձնամաքրման և սառցակալման դեմ պայքարի միջոցառումների իրականացման ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի թիվ 1419 որոշումը (այսուհետ՝ Որոշում), աղի հետ օգտագործվում է նաև մեծ քանակությամբ ավազ (չմշակված աղ-ավազ), որը հետագայում հանգեցնում է մթնոլորտային օդի աղտոտվածության՝ դրանից առաջացած փոշու արտանետումների հետևանքով, հատկապես երթևեկության և քամիների ժամանակ՝ աղբոտելով փողոցների հարակից տարածքները:

Խնդրի լուծման համար առաջարկություն է ներկայացվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և Շրջակա միջավայրի նախարարություններին՝ Որոշման մեջ փոփոխություն կատարելու նպատակով վերը նշված միջոցառումների ժամանակ ավազը այլ նյութերով փոխարինելու (հաշվի առնելով միջազգային փորձը), ինչը կնպաստի նշված գործոնով պայմանավորված մթնոլորտային օդ փոշու արտանետումների նվազմանը կամ բացառմանը:

5. Վերահսկողական գործառույթներ իրականացնելիս արձանգրվել են իրավախախտման դեպքեր, որտեղ իրավախախտումները մեկից ավելի են, սակայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 81.1-ին հոդվածով նախատեսված է մեկ

պատասխանատվություն: Առաջարկություն է ներկայացվել Գրասենյակ Օրենսգրքում կատարել փոփոխություններ՝ մասնավորապես, շինհրապարակներում արձանագրված յուրաքանչյուր խախտման համար նախատեսել առանձին պատասխանատվություն:

6. Երևան քաղաքում վերահսկողական գործողություններ իրականացնելիս պարզվել է, որ ճանապարհներին իրականացվում են գազատարների, էլեկտրահաղորդալարերի, կոյուղատարների, ջրագծերի և այլ կոմունիկացիաների անցկացման համար խրամուղիների փորման աշխատանքներ: Աշխատանքները ոչ պատշաճ կազմակերպելու (շինարարական հրապարակները սահմանված ձևով չկահավորելու) և ժամանակին ճանապարհները չասֆալտապատելու հետևանքները հանգեցնում են փոշու արտանետումներով օդի աղտոտվածության մակարդակի բարձրացմանը:

Վերը նշված խնդրի լուծման համար առաջարկվել է Երևանի քաղաքապետարանին նշված աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները կանխարգելելու նպատակով հսկողությունը խստացնել, ինչպես նաև շինարարական աշխատանքներով հագեցված տարածքների հարակից ասֆալտապատված փողոցները օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար ջրել:

7. Առաջարկություն է ներկայացվել Գրասենյակին, որ մետաղական և ոչ մետաղական հանքավայրերը, օգտակար հանածո վերամշակող ձեռնարկությունները, գործունեության իրականացման տարածքում՝ արտանետման կազմակերպված աղբյուրների վրա, պետք է ապահովեն օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը (Օրինակ՝ Пылемер ПИКП-Т, Пылемер ИКВЧ-С կամ դրանց համարժեք սարքավորումներ)՝ առցանց հարթակի հասանելիությամբ և Լիազոր մարմնի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ:

8. 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների չափումների իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության № 2410-Ն որոշման կարգում անհրաժեշտ է իրականացնել մի շարք փոփոխություններ որոշումը ներկա ժամանակաշրջանում կիրառելի դարձնելու համար: Վերոգրյալի հիմքով գրություն է ուղարկվել Լիազոր մարմին և Գրասենյակ օրենքը և կարգը փոփոխելու նպատակով: Ըստ ներկայացված նախագծի ԲԸՏՄ վերահսկողություն է իրականացնելու ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեություն իրականացնող ավտոպարկերում և տրանսպորտային միջոցների տեխնիկական զննութուն

իրականացնողների արտադրական բազայում: ՀՀ մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցների վերահսկողությունը կատարելու է մաքսային ծառայությունը, իսկ ճանապարհներին՝ ոստիկանությունը:

9. Մթնոլորտային օդի աղտոտվածության աղբյուր են հանդիսանում ավտոմեքենաներից արտանետումները: Ավելին, ՀՀ չգրանցված (չհաշվառված)՝ ՀՀ մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման դիմաց՝ ՀՀ յուրաքանչյուր մուտքի համար՝ ըստ դրանց տեսակի և բեռնատարողության (ըստ ԱՏԳ ԱԱ ծածկագրի) գանձվում է բնապահպանական հարկ բանած գազերում վնասակար նյութերի (ածխածնի օքսիդի, ածխաջրածինների, ծխայնության) պարունակության սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում, սակայն նշված գործառույթը չի իրականացվում մաքսակետերում, ՊԵԿ-ի կողմից առանց մթնոլորտային օդն աղտոտող նյութերի չափման՝ գանձվում է բնապահպանական հարկը՝ նվազագույն չափով:

2.2. Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**202**
կայացվել է վարչական տույժի որոշում	**122**
նշանակվել է վարչական տուգանք	**92,700,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**64**
հաշվարկվել է պատճառված վնաս	**1,154,377,275** *դրամ*
որից՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ում	**431,159,194** *դրամ*

Իրականացված ստուգումներ

Ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման վերահսկողությունը ԲԸՏՄ իրականացնում է ջրային ռեսուրսների ինքնակամ և ոչ նպատակային օգտագործման, ջրօգտագործման թույլտվություն և ազատ ջրօգտագործում պահանջող ջրօգտագործման իրականացման պահանջների կատարման և սահմանված չափաքանակներից ավել ջրային ռեսուրսներն աղտոտելու նկատմամբ:

2025 թվականի ընթացքում ջրային ռեսուրսների պահպանության և օգտագործման վերաբերյալ իրականացված ստուգումներում և/կամ վարչական վարույթներում ընդգրկվել են հետևյալ ոլորտները

- Արտադրություն/շինարարություն՝ 74,
- Ջրօգտագործող ընկերություններ, հիդրոէլեկտրաէներգիայի արտադրություն՝ 57,
- ՏԻՄ գործունեություն և սպասարկում՝ 43,
- Ձկնաբուծություն՝ 15,
- Հանքարդյունաբերություն՝ 9,
- Այլ՝ 4:

Ապօրինի ջրառ իրականացնելու հետևանքով կայացվել է թվով 73 գործունեությունը/գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշումներ, որոնցից 5-ը խախտումները վերացնելու հիմքով կասեցումից հանվել են: Խախտումները վերացնելու հիմքով 2024 թվականին կայացված կասեցումներից թվով 5 կասեցում հանվել են՝ խախտումները վերացնելու հիմքով:

Ընդհանուր ստուգումներով հայտնաբերված ապօրինի ջրառ իրականացնելու հետևանքով կանխվել է շուրջ 268,5 լ/վրկ կամ տարեկան կտրվածքով 6,485,400 մ3 ապօրինի ջրօգտագործում:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները՝

- առանց ջրօգտագործման թույլտվության ջրառի իրականացում,
- ջրօգտագործման թույլտվությունների պայմանների և պահանջների խախտումներ:

Ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանման ուղղությունով խախտումները նվազեցնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումներ.

1. Առանց ջրօգտագործման թույլտվության 987 խորքային հորի շահագործման մասին

ստացված տեղեկատվությունների հիման վրա 2025 թվականի ընթացքում իրականացվել է 215 խորքային հորերի շահագործման օրինականությունը պարզելու 36 ստուգում, 36 դիտարկում և 4 վարչական վարույթ: Վերահսկողության գործառույթներով պարզվել է.

Արմավիրի մարզ

- Արդյունաբերական 6 խորքային հորից՝ 5 խորքային հորերի շահագործումը կասեցվել է,
- Գյուղատնտեսական 70 խորքային հորից՝ 40 խորքային հորերի շահագործումը կասեցվել է:

Արարատի մարզ

- Ռոգման 130 խորքային հորից՝ 4 խորքային հորերի շահագործումը կասեցվել է,

- Ջրարբիացման 1 խորքային հորի շահագործումը կասեցվել է,
- Արդյունաբերական՝ 3 խորքային հորի շահագործումը կասեցվել է,
- Խմելու - կենցաղային, ոռոգման 5 խորքային հորից՝ 4 խորքային հորերի շահագործումը կասեցվել է:

  Արդյունքում նշանակվել է 37,600,000 ՀՀ դրամի վարչական տուգանք, հաշվարկվել է 52,094,714 ՀՀ դրամի շրջակա միջավայրին պատճառված վնաս և թվով 54 խորքային հորի շահագործումը կասեցվել է:

Ապօրինի ջրառ իրականացնելու հետևանքով կանխվել է շուրջ 224,5 լ/վրկ կամ տարեկան կտրվածքով 5,097,816 մ3 ապօրինի ջրօգտագործում:

Իրականացված ստուգումներով պարզվել է, որ խորքային հորերը օգտագործվում են ապօրինի կամ չեն շահագործվում, մասնավորապես՝

- Արմավիրի մարզում տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց մոտ իրականացված ստուգումների և դիտարկումների արդյունքում պարզվել է, որ 68 խորքային հոր ենթակա է կոնսերվացման:
- Արարատի մարզում իրականացված ստուգմամբ պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտը («Երևան» ՋՕԸ) ընդունում է որոշ քանակությամբ խորքային հորերի շահագործման փաստը, իսկ մնացածի մասով իր հայտարարությամբ չի շահագործվում իր կողմից և ներկայացրել է խորքային հորերի ընդունման-հանձնման ակտերը, ըստ որոնց դրանք հանձնվել են Մասիս համայնքին:

  ԲԸՏՄ պարզել է, որ Մասիսի համայնքը չունի ջրօգտագործման թույլտվություն և խորքային հորերը չեն շահագործվում համայնքի կողմից, որի հիմքով գրություններ են ներկայացվել Շրջակա միջավայրի նախարարություն (այսուհետ՝ Լիազոր մարմին)՝ խորքային հորերը լուծարման և/կամ կոնսերվացման աշխատանքներում ներառելու համար:

  Կոնսերվացման և/կամ լուծարման դեպքում հետագա օգտագործման համար կխնայվի մոտ 976 լ/վ ջուր կամ տարեկան կտրվածքով 20,238,336 մ3 ջուր:

2. Ազգային անվտանգության ծառայության գրության հիման վրա Սյունիքի մարզի Գորիս, Տաթև, Սիսիան և Մեղրի համայնքներում գործող 11 փոքր հիդրոէլեկտրոկայաններից (ՓՀԷԿ) 7-ի մոտ ստուգումներն իրականացվել էին 2024 թվականի ընթացքում, իսկ մնացած 4-ի մոտ 2025 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերվել են ջրօգտագործման

թույլտվության պահանջների խախտման դեպքեր՝ իրականացրել են ջրօգտագործման թույլտվություններով սահմանված չափաքանակներից ավել ջրառ, ինչի հետևանքով հաշվարկվել է 99,116,744 ՀՀ դրամի վնաս և պատասխանատուները ենթարկվել են վարչական տույժի՝ 2,000,000 ՀՀ դրամի չափով:

3. Ի կատարումն ՀՀ վարչապետի 2024 թվականի դեկտեմբերի 9-ի N02//42202-2024, ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի N47 ու 2024 թվականի նոյեմբերի 28-ի N48 նիստերի ընթացքում տրված հանձնարարականների ԲԸՏՄ շարունակական վերակսկողական գործառույթներ է իրականացրել ՀՀ մարզերում գործող ավտոլվացման կետերում, մասնավորապես 13 դիտարկման արդյունքում կասեցվել է 2 ավտոլվացման կետի գործունեություն/գործողություն:

4. ԲԸՏՄ կողմից իրականացվել է ստուգում «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերությունում: Լիազոր մարմնի կողմից Ընկերությանը տրվել է 44 ջրօգտագործման թույլտվություն (ՋԹ), որից 1-ը էներգետիկ նպատակով՝ ՓՀԷԿ-ի շահագործում:

<u>Ջրօգտագործում</u> (առանց ՓՀԷԿ)

1. Ըստ տրված ՋԹ-ների Ընկերությունը ջրառ պետք է իրականացնի 705 ջրառի կետերից՝ 843,605,901 մ^3 ծավալով, որից՝ ստորերկրյա ջրերից՝ 788,565,032 մ^3, մակերևութային ջրերից՝ 55,040,869 մ^3: Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկներում որպես բնօգտագործման վճար Ընկերությունը ներկայացրել է ՋԹ-ով տրված ջրառի առավելագույն չափաքանակները՝ 843,605,901 մ^3:

Ստուգման ընթացքում պարզվել է, որ 705 ջրառի կետերից՝ 496-ը ստորերկրյա աղբյուրներ են, որից 92 չշահագործվող, 192-ը խորքային հորեր են, որից 47 չշահագործվող, 17-ը մակերևութային ջրառի կետեր են, որից 1 չշահագործվող: Այսպիսով՝ 705 ջրառի կետերից չի շահագործվում 20%: Ստուգմամբ նաև պարզվել է, որ գործող 565 ջրառի կետերից ջրաչափեր տեղադրված են 182-ում, սակայն 66 ջրաչափերը տեղադրված են ՋԹ-ով սահմանված վայրում, իսկ 116 ջրաչափերը տեղադրված են ՋԹ-ով սահմանված վայրից դուրս: Ավելին, Լիազոր մարմնի կողմից կնքված են 91 ջրաչափերը, մնացած ջրաչափերը կնքված չեն: Այսպիսով, Ընկերությունը խախտել է ջրօգտագործման թույլտվություններով սահմանված պահանջները, որը հանգեցրել է այն եզրակացության, որ Ընկերության կողմից ներկայացված ջրառի ծավալները չեն կարող հավաստի լինել:

Ստուգվող Ընկերության շահագործման ներքո գտնվող Արարատյան 3 - 4 հերթերի խորքային հորերում և Ռանչպարի խորքային հորերում (Արարատյան 1-2) իրականացվել են ջրաելքերի ջրաչափումներ: Արարատյան 3 և 4 հերթերի 39 ջրաղբյուրներից /Արտեզյան (ճնշումային)/ շահագործվում են միայն 28-ը, որոնց ջրաչափման ընդհանուր ջրաելքը կազմում է 1309 լ/վ: Խորքային հորերից ջուրը խողովակաշարով տեղափոխման արդյունքում տեղի է ունենում 684 լ/վ ջրի կորուստ, որը կազմում է 52 %, մնացած 623 լ/վ ջրից ջրաչափիչ սարքի տվյալի համաձայն դեպի բաժանորդներ են մղվող 145 լ/վ, իսկ 480 լ/վ ջուրը, որը կազմում է 36.66% թափվում է դեպի հարակից դրենաժ:

Նույն իրավիճակը տիրում է Ռանչպարի (Արարատյան 1-2) խորքային հորերում, որտեղ 458 լ/վ ջուրը խողովակաշարով տեղափոխման արդյունքում ջրի կորուստը կազմում է 109 լ/վ, որը կազմում է 23,8%, մնացած 349 լ/վ ջրից դեպի բաժանորդներ են մղվող 147 լ/վ, իսկ 202 լ/վ ջուրը, որը կազմում է 44,1% թափվում է դեպի հարակից դրենաժ:

Ստուգման ընթացքում Ընկերության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում «Արարատյան» 3-րդ և 4-րդ հերթերի, ինչպես նաև «Ռանչպար» խորքային հորերի ջրթափ խողովակաշարերից արտահոսած անտնտեսվար ջրի ծավալը կազմում է 21,023,070 մ^3 (2023թ.-5,988,210մ^3, 2024թ.-8,774,520մ^3, 2025թ.-6,260,340մ^3), որի արդյունքում կատարվել է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատում՝ 189,207,630 ՀՀ դրամի չափով: Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

Բացի վերը նշվածից, ստուգմամբ արձանագրվել է, որ Ընկերությունը 7 ջրառի աղբյուրից առանց ՋԹ իրականացնում է ջրօգտագործում, որի համար կատարվել է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատում՝ 114,350,069 ՀՀ դրամի չափով: Նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

<u>Արտահոսք (կոյուղի)</u>

Ստուգմամբ պարզվել է, որ Լիազոր մարմնի կողմից Ընկերության տրված ՋԹ-ների համաձայն կեղտաջրերը 31 կետով առանց մաքրման պետք է լցվեն ՀՀ 21 գետեր և 2 հեղեղատարներ, ընդհանուր 302,718,806 մ^3/տ ծավալով, որը կազմում է ՋԹ-ով տրված ջրառի (843,605,901 մ^3) 35.88%: Բացի Ընկերությանը ՋԹ-ներով տրված արտահոսքի կետերից, ստուգմամբ արձանագրվել է նաև 40 արտահոսք, որտեղ կեղտաջրերը առանց ՋԹ լցվում են ջրային ռեսուրս:

Ստուգմամբ կատարվել է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատում՝ որը կազմում է 319,429,927 ՀՀ դրամ:

Ընդհանուր հաշվարկվել է 622,987,626 ՀՀ դրամի չափով վնաս:

Ստուգման արդյունքների հիման վրա 2026 թվականի Ծրագրով նախատեսվել է իրականացնել ուսումնասիրություն ՀՀ տարածքով հոսող 23 կոյուղատար գետերի (21 գետեր և 2 հեղեղատարներ), որոնց արդյունքներով ՀՀ կառավարությանը կներկայացվի կոյուղատար գետերի համակարգային խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները:

Ստուգման արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և Շրջակա միջավայի նախարարություններին, Ջրային կոմիտեին և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

5. 2025 թվականի ընթացքում իրականացվել է ստուգում 3 ՋՕԸ-ներում:

1. «ԵՐԵՎԱՆ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում առանց ՋԹ ստորգետնյա ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի համար հաշվարկվել է 51,828,048 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս: Գործի նյութերն ուղարկվել են Քննչական կոմիտե: Առկա է դատական գործ (վնասի մասով), որն ընթացքի մեջ է:

2. «ԼՈՌԻ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում առանց ՋԹ մակերևութային ջրային ռեսուրսներից իրականացված ջրառի համար նշանակվել է 500,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք, հաշվարկվել է 37,559,700 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս:

3. «ՇԵՆԻԿ» ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՋԸ-ում ստուգումն ամփոփման փուլում է: Հաշվարկվել է 19,825,063 ՀՀ դրամի չափով տնտեսական գործունեության հետևանքով ջրային ռեսուրսներին պատճառված վնաս:

Վերահսկողական աշխատանքների ընթացքում 208 ապօրինի ընդերքօգտագործման դեպքերից 6-ում ձկնաբուծարանի կառուցման պատրվակով կատարվել է ԱԿԽ-ի քողարկված ապօրինի արդյունահանում, որի ծավալը կազմել է 212,945մ^3:

Հաշվի առնելով, որ ձկնաբուծարաններ կառուցելու պատրվակով իրականացվել է քողարկված ապօրինի ընդերքօգտագործում, առաջարկություն է ներկայացվել, որ ձկնաբուծարան կառուցելուց առաջ ձեռք բերվի ձկնաբուծական նպատակով ջրօգտագործման թույլտվություն:

Ոլորտային ռիսկերի նվազեցմանն ուղղված առաջարկներ

ԲԸՏՄ կողմից առաջարկություն է ներկայացվել Գրասենյակ՝ «Ջրային ռեսուրսի հունը կենցաղային աղբից, ջրաբերուկներից և բնական հոսքը խոչընդոտող այլ օբյեկտներից մաքրման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, որը մասնակի ընդունվել է:

2.3. Վտանգավոր նյութեր, արտադրություն ու սպառման թափոններ

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**112**
կայացվել է վարչական տույժի որոշում	**61**
նշանակվել է վարչական տուգանք	**2,970,000** *դրամ*

2025 թվականի ընթացքում վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների վերաբերյալ իրականացված ստուգումներում և/կամ վարչական վարույթներում ընդգրկվել են հետևյալ ոլորտները

- Արտադրություն/շինարարություն՝ 64,
- Սպասարկման ոլորտ (բուժ. հիմնարկ, թափոնների հավաքագրում, ՏԻՄ գործունեություն)՝ 23,
- Ձկնաբուծություն և անասնաբուծություն՝ 16,
- Հանքարդյունաբերություն՝ 6,
- Այլ՝ 3:

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները

- թափոնների անձնագրավորման բացակայություն,
- թափոնների սկզբնական հաշվառման բացակայություն,
- վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի բացակայություն:

Կանխարգելիչ միջոցառումներ

ԲԸՏՄ նախաձեռնությամբ կատարվել են ուսումնասիրություններ ՀՀ տարածքում գործող աղբավայրերի գույքագրման աշխատանքներ իրականացնելու օրինականության հետ կապված, որի շրջանակներում հարցում է կատարվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ու Շրջակա միջավայրի նախարարություններին՝ ՀՀ տարածքում գործող և գործունեությունը դադարեցրած, ռեեստրային գրանցում և լիցենզավորում անցած աղբավայրերի վերաբերյալ: Ստացված տեղեկատվությունը տրամադվել էր ԲԸՏՄ ՏԲ-ներին տեղեկատվությունը ճշտելու նպատակով:

Համաձայն ստացված տեղեկատվության ՀՀ 2025 թվականին գործում են 96 աղբավայրեր, իսկ 2023 թվականին գործել են 123 աղբավայրեր: Տեղեկատվության վերլուծության արդյունքում պարզվել է, որ 2023-2025թթ. ժամանակահատվածում իրենց գործունեությունը դադարեցրել են 37 աղբավայրեր՝ որից 2-ը Արագածոտնի մարզում, 10-ը Արմավիրի մարզում, 13-ը Գեղարքունիքի մարզում, 1-ը Լոռու մարզում, 3-ը Կոտայքի մարզում և 8-ը Տավուշի մարզում:

Նույն ժամանակահատվածում հայտնաբերվել են նոր 10 աղբավայրեր, որոնցից 1-ը՝ Գեղարքունիքի, 3-ը՝ Տավուշի և 6-ը՝ Շիրակի մարզերում:

Պարզվել է նաև, որ 96 գործող աղբավայրերից 7-ը տեղակայված են բնակավայրերի նպատակային նշանակության հողերի վրա, 37-ը՝ գյուղատնտեսական, 4-ը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ մնացած 48-ը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողերի վրա:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարությունից ստացված տեղեկատվության ՀՀ ՇՄԱԳ փորձաքննություն դրական եզրակացություն և ՀՀ վտանգավոր թափոնների գործածության գործունեության **լիցենզիա է ստացել 4 տնտեսավարող սուբյեկտ**՝ «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ, «Արարատ համայնքի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկ, «Էկո-Կենտրոն» ՍՊԸ (Արագածոտնի մարզ, Սասունիկի աղբավայր), «Անկոլո» ՍՊԸ (Կոտայքի մարզ, Ջրվեժ):

2025 թվականի հուլիս ամսից արդեն իսկ սկսել է գործունեություն իրականացնել «Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊ ընկերությունը, ինչով պայմանավորված նախատեսվում է

դադարեցնել Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի մնացած բոլոր աղբավայրերի գործունեությունը:

2026 թվականին նախատեսվում է գույքագրել և ուսումնասիրել ՀՀ առկա աղբավայրերը:

2.4. Հողերի օգտագործում և պահպանություն

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**327**
կայացվել է վարչական տույժի որոշում	**113**
նշանակվել է վարչական տուգանք	**11,980,000** *դրամ*
իրականացվել է վնասի հաշվարկ	**385**
հաշվարկվել է պատճառված վնաս	**5,314,446,065** *դրամ*

Առավել հաճախ արձանագրվել են հետևյալ խախտումները

- Հողի բերրի շերտի աղբոտում, որը կապված է շինարարությունից առաջացած թափոնները ոչ սահմանված վայրերում տեղադրելու հետ:
- Հողի բերրի շերտի դեգրադացիա, որոնք հայտնաբերվել են հիմնականում ընդերքօգտագործման և ձկնաբուծության ոլորտի տնտեսավարողների մոտ, մասնավորապես՝ չեն իրականացվել հողի բերրի շերտի հանման և պահպանման պարտավորությունները:
- Հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխում:

Իրականացված վերահսկողական գործառույթների շրջանակներում արձանագրվել է հողերի բերրի շերտի աղբոտված հողերի 123.11 հա տարածք, դեգրադացման 333.44 հա տարածք և աղտոտված հողերի 0.001 հա տարածք, ընդհանուր 456.551 հա տարածք,

մասնավորապես.

Դեգրադացված հողերի մակերեսը ըստ նպատակային նշանակության

- անտառային 22.09 հա
- արդյունաբերական, ընդերքօգտագործման, այլ արտադրական նշանակության 26.32 հա
- բնակավայրերի 5.48 հա
- գյուղատնտեսական 246.46 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների 0.01 հա

- հատուկ նշանակության 10.41 հա
- հատուկ պահպանվող տարածքների 3.10 հա
- ջրային 19.57 հա

Աղբոտված հողերի մակերեսը ըստ նպատակային նշանակության

- անտառային 0.19 հա
- արդյունաբերական, ընդերքօգտագործման, այլ արտադրական նշանակության 2.26 հա
- բնակավայրերի 12.81 հա
- գյուղատնտեսական 98.63 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների 0.31 հա
- հատուկ նշանակության 4.11 հա
- հատուկ պահպանվող տարածքների 2.51 հա
- ջրային 2.29 հա

Աղտոտված հողերի մակերեսը (մետր/ քառակուսի)

- Անտառային 0.001 հա:

Հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման նկատմամբ իրականացվող միջոցառումների ընթացքում արձանագրվել է իրավախախտման 18 դեպք (133,8մ^3 հողի բերրի շերտ), կայացվել է 18 վարչական տույժ նշանակելու մասին որոշում, նշանակվել է 880,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

ՀՀ վարչապետի 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 02//44701-2024 հանձնարարականի հիմքով ԲԸՏՄ կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակներում պարզվել է, որ 2025 թվականի հունվարի 31-ի դրությամբ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ընդհանուր 154,330 մ^2 մակերեսով տարածքում և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ վարչական տարածքի ընդհանուր 9,287 մ^2 մակերեսով տարածքում անհայտ անձանց կողմից անորոշ ժամանակահատվածում լցվել է կենցաղային, արտադրական և շինարարական աղբ, որի արդյունքում տեղի է ունեցել պետական սեփականություն հանդիսացող հողերի աղբոտում: ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշմամբ սահմանված կարգով իրականացվել է հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման հաշվարկ, համաձայն որի՝ աղբոտման հետևանքով հողային ռեսուրսներին հասցված վնասի չափը կազմել է 1,293,349,079 ՀՀ դրամ:

ՀՀ պետական վերահսկողության ծառայությունից ստացված գրության հիմքով ստուգում է իրականացվել ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան, Արզնի և Չարենցավան համայնքներում՝ Մ-4 մայրուղու հարակից տարածքում պետական սեփականություն հանդիսացող անտառային շերտի միջով հողամասերի մուտքերն ու ելքերն ապօրինի կազմակերպման դեպքերով 12 տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց մոտ իրականացվել են ստուգումներ, որոնց արդյունքում արձանագրվել է 1,974 մ^2 դեգրադացված հող, որի համար հաշվարկվել է 462,687 ՀՀ դրամ վնաս, 8,882.87 մ^2 ասֆալտապատված և բետոնյա շինություններով կառուցապատված տարածք, որի համար հաշվարկվել է 44,414,350 ՀՀ դրամի վնաս, 2 դեպքով նշանակվել է վարչական տուգանք՝ ընդհանուր 200,000 ՀՀ դրամի չափով, մնացած 10 դեպքով գործերը ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

2.5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**67**
կայացվել է վարչական տույժի որոշում	**46**
նշանակվել է վարչական տուգանք	**45,100,000** *դրամ*

Կայացվել է թվով 6 գործունեությունը կասեցնելու վերաբերյալ որոշում, որոնցից մեկը կասեցումից հանվել է:

Համաձայն ԲԸՏՄ ղեկավարի 2025 թվականի հուլիսի 4-ի N 6-Լ հրամանի՝ պետական հաշվեկշռում գտնվող և չգործող պոչամբարներում շրջակա միջավայրի վրա ազդեցության ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ:

Հայաստանում հանքարդյունաբերությունը կենտրոնացած է հատկապես Սյունիքում, Լոռիում և Գեղարքունիքում: Այս շրջաններում շատ պոչամբարներ գտնվում են գետերի մոտ, լեռնային լանջերին կամ բարձրադիր հարթավայրերում և առկա են ռեկուլտիվացման ենթակա պոչեր, իսկ ռեկուլտիվացված պոչերը միայն տեխնիկական ռեկուլտիվացում է արվել, որը ենթադրում է տարածքի ֆիզիկական վերակառուցում:

ՀՀ-ում առկա է 22 պոչամբար, որից 7-ը գործող է, 6-ը ռեկուլտիվացված, 9-ը ենթակա է ռեկուլտիվացման:

Աշխատանքային խումբը գետերի ջրի և պոչամբարի մակերևույթի հողագրունտի որակական չափանիշների ուսումնասիրման նպատակով վերցված նմուշները լաբորատորիայում ենթարկվել են անալիտիկ հետազոտության:

Լաբորատորիայում արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ գետերի ջրի որակական կազմը էական փոփոխության չի ենթարկվել, այն իր վրա չի կրում պոչանքի ազդեցությունը: Սակայն պոչամբարի մակերեսին նկատվել է մետաղների բարձր քանակություն:

Արդյունքում առաջարկվում է պոչերում կատարել բիոլոգիական ռեկուլտիվացում, որի նպատակն է բնական միջավայրի վերականգնումը.

- Հողային շերտի ձևավորում,
- Բուսականության վերականգնում,
- Կենսաբազմազանության զարգացում՝ միջատների, կենդանիների բնական վերադարձի խթանում:

Բնական միջավայրի վերականգնումը բնակչությանը տալիս է մի շարք կարևոր շրջակա-միջավայրային, սոցիալական և առողջապահական օգուտներ,մասնավորապես՝

- Առողջ միջավայր
- Կանաչ տարածքներ
- Տնտեսական օգուտներ
- Բնության վերականգնում
- Հոգեբանական և սոցիալական ազդեցություն

2.6. Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների, վիճակագրական հաշվետվությունների ուղղություններով

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**499**
կայացվել է վարչական տույժի որոշում	**279**
նշանակվել է վարչական տուգանք	**19,070,000** *դրամ*

3. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Իրականացված վերահսկողական աշխատանքներ

- *Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի խախտում.....296*
- *«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի խախտում.....52*
- *Հողային օրենսգրքի խախտում.....184*
- *«Թափոնների մասին» ՀՀ օրենքի խախտում.....13*
- *«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի խախտում.....25*
- *Հարկային օրենսգրքի խախտում.....57*
- *«Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի խախտում.....22*
- *Ջրային օրենսգրքի խախտում.....8*
- *«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի խախտում....15*

➢ Ընհանուր հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 2,042,139,643 ՀՀ դրամի չափով, որից

1) Հողային ռեսուրսներին պատճառված վնասը կազմում է 1,900,707,227 ՀՀ դրամ
2) Մթնոլորտային օդին պատճառված վնասը կազմում է 135,252,112 ՀՀ դրամ
3) Ջրային ռեսուրսներին պատճառված վնասը կազմում է 6,101,890 ՀՀ դրամ
4) Թափոններով պատճառված վնասը կազմում է 78,414 ՀՀ դրամ

➢ Հաշվարկվել է պետությանը պատճառված վնաս՝ 26,369,045,787 ՀՀ դրամ (հաշվարկվել է ՊԵԿ-ի կողմից ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի ծավալի հիման վրա միայն 76 դեպքով):

Իրականացված ստուգումներ

2025 թվականի ընթացքում իրականացվել է 100 ստուգում, որից 78-ը ավարտվել է (26 տարեկան ծրագիր, 74 արտաժրագրային), 14-ը գտնվում է ընթացքի մեջ:

Ներքոնշյալ տվյալների մեջ են մտնում 2024 թվականից սկսված, սակայն 2025 թվականին ավարտված ստուգումների տվյալները:

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**672** *հատ*
կայացվել է վարչական տույժի որոշում	**195** *հատ*
նշանակվել է վարչական տուգանք	27,160,000 *դրամ*
հաշվարկվել է պատճառված վնաս	182,941,574 *դրամ*

Հայտնաբերվել է ապօրինի արդյունահանման 32 դեպք, որից 30-ը ոչ մետաղական, իսկ 2-ը մետաղական հանքավայրերում:

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**556**
կայացվել է վարչական տույժի որոշում	**157**
նշանակվել է վարչական տուգանք	**21,450,000** *դրամ*
հաշվարկվել է պատճառված վնաս	**180,209,581.0** *դրամ*

- 30 դեպքով ապօրինի արդյունահանված ծավալը կազմում է 1,462,932.6 մ^3, իսկ 25 դեպքով թաքցված ծավալը կազմում է 378,439.3 մ^3
- 2 մետաղական հանքավայրերում ստուգման արդյունքում հայտնաբերված ապօրինի արդյունահանված և թաքցված ծավալներն ըստ տեսակների՝
    - Հանքաքար 10 897 468 մ^3
    - Ոսկի 82,646 կգ
    - Արծաթ 661 կգ
    - Պղինձ 66 573 տ
    - Մոլիբդեն 12 513 տ

3.1. Ընդերքի շահագործման վերահսկողություն

Իրականացվել է 69 ստուգում, որից 22-ը տարեկան ծրագրով, 47-ը արտաժրագրային ստուգում, 57 ստուգում ավարտվել է, 12–ը գտնվում է ընթացքի մեջ:

Ներքոնշյալ տվյալների մեջ են մտնում նաև 2024 թվականից սկսված, սակայն 2025 թվականին ավարտված ստուգումների տվյալներ:

Ավարտված 57 ստուգման արդյունքում կազմվել է 57 ստուգման ակտ: Տրվել է խախտումները վերացնելու 47 հանձնարարական:

Ապօրինի արդյունահանված օգտակար հանածոյի ծավալի հիման վրա միայն 25 դեպքով ՊԵԿ-ի կողմից հաշվարկվել է պետությանը պատճառված վնաս՝ 26,369,045,787.0 ՀՀ դրամ:

3.2. Հանքային ջրերի և երկրաբանական ուսումնասիրությունների վերահսկողություն

Իրականացվել է 31 ստուգում, որից 4-ը տարեկան ծրագրով, 27 արտածրագրային ստուգում, 29-ը ավարտվել է, իսկ 2-ը գտնվում է ընթացքի մեջ:

Վերահսկողության արդյունքի նկարագրությունը	քանակ/գումար
արձանագրված իրավախախտում	**116**
կայացվել է վարչական տույժի որոշում	**38**
նշանակվել է վարչական տուգանք	**5,710,000** *դրամ*
հաշվարկվել է պատճառված վնաս	**1,415,714.0** *դրամ*

Ավարտված 29 ստուգման արդյունքում կազմվել է 27 ստուգման ակտ և 2 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք:

31 ստուգումից՝ 27-ի հիմքն են հանդիսացել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրությունները, կապված՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 7-րդ հոդվածի 6.5-րդ մասի համաձայն առաջնային երկրաբանական փաստագրման նյութերի և փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատականի, ինչպես նաև դրանց արժանահավատության հավաստումների հետ:

Հայտնաբերված ոչ մետաղական օգտակար հանածոյի ապօրինի ընդերքօգտագործման դեպքերի վերաբերյալ

2025 թվականի ընթացքում ԲԸՏՄ կողմից ստուգումներով և վարչական վարույթների շրջանակներում հայտնաբերվել է ապօրինի ընդերքօգտագործման և արդյունահանված ծավալները թաքցնելու 233 դեպք, որից 30 ապօրինի ընդերքօգտագործման և 25 արդյունահանված ծավալները թաքցնելու դեպքերը հայտնաբերվել են ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերություններում իրականացված ստուգումների արդյունքում, իսկ 178-ը ԲԸՏՄ նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթների շրջանակներում:

Ընդհանուր 208 հայտնաբերված ոչ մետաղական ապօրինի արդյունահանման ծավալը կազմում է 14,527,941.6 մ^3, իսկ 25 դեպքով թաքցված ծավալը կազմում է 378,439.4 մ^3:

Ընդհանուր 233 ապօրինի ընդերքօգտագործման և արդյունահանված ծավալները թաքցնելու դեպքերով հաշվարկվել է 14,906,381.0 մ^3 և շրջակա միջավայրին պատճառված վնաս 1,860,514 347.9 ՀՀ դրամի չափով:

Բացի վերոնշյալից, ԸՎՎ կողմից իրականացվել են նաև թվով 113 չափագրման աշխատանքներ, որոնց արդյունքում հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված վնաս 4,379,516,670.0 ՀՀ դրամի չափով:

Ընդհանուր 346 դեպքերով հաշվարկվել է 14,527,941 մ^3 ծավալ և շրջակա միջավայրին պատճառված վնաս 6,240,031,017 ՀՀ դրամի չափով: Պետական եկամուտների կոմիտեի կողմից պետությանը պատճառված վնասը կազմում է՝ 26,369,045,787 ՀՀ դրամ:

Ստորև ներկայացվում է ստուգումների և վարչական վարույթների շրջանակներում հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման և արդյունահանված ծավալները թաքցնելու դեպքերը՝ ըստ մարզերի և օգտակար հանածոյի.

Աղյուսակ 24

Հ/Հ	Մարզ	Դեպքերի քանակ	Ծավակ մ3
1	Արմավիր	41.0	1,973,632.0
2	Արագածոտն	16.0	1,003,688.0
3	Արարատ	19.0	383,880.0
4	Գեղարքունիք	24.0	722,305.0
5	Լոռի	26.0	241,657.4
6	Կոտայք	25.0	5,613,657.0
7	Շիրակ	8.0	421,580.6
8	Սյունիք	43.0	3,857,077.0
9	Վայոց ձոր	7.0	24,159.0
10	Տավուշ	21.0	541,575.0
11	Երևան	3.0	123,170.0
Ընդհանուր		233.0	**14,906,381.0**

Աղյուսակ 25

Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Դեպքերի քանակ	Ծավալ մ^3
1	Բազալտ	78.0	2,257,275.6
2	ԱԿԽ	70.0	2,327,117.9
3	Հողագրունտ	11.0	4,529,315.0
4	Սևահող	5.0	24,584.0
5	Խճաքար	3.0	87,584.0
6	Մարմարացված կրաքար	4.0	146,225.0
7	Գաբբրո	3.0	17,744.0
8	Խարամ	20.0	3,361,552.6
9	Տուֆ	15.0	1,420,114.7
10	Տրավերտին	3.0	6,284.6
11	Պեռլիտ	2.0	20,958.0
12	Բրեկչա	1.0	132,322.0
13	Լիթոիդային պեմզա	12.0	519,645.0
14	Կավ	1.0	46.0
15	Դիատոմիտ	1.0	2,423.6
16	Օբսիդիան	0.0	0.0
17	Դոլերիտ	1.0	1,884.0
18	Մարմար	2.0	37,380.0
19	Տորֆ	1.0	13,925.0
Ընդհանուր		233.0	**14,906,381.0**

ԲԸՏՄ նախաձեռնությամբ հայտնաբերված ապօրինի ընդերքօգտագործման դեպքերն ըստ մարզերի և օգտակար հանածոյի.

Աղյուսակ 26

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Արմավիր	1	բազալտ	59,399.0	41,941.0	1
	2	տուֆ	1,012,706.0	7,588,274.0	2.0
	3	սևահող	1,274.0	30,648.0	1.0
	4	հողագրունտ		9 505,0	
	5	հրաբխային խարամ	63,624.0	40,151.9	2.0
	6	կավ			
	7	ԱԿԽ	733,948.0	65,973,135.2	27.0
		Ընդհանուր	1,870,951.0	73,683,655.1	33.0

Աղյուսակ 27

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Արագածոտն	1	հողագրունտ	24,099.0	634,390.0	2.0
	2	բազալտ	45,596.0	904,823.0	1.0
	3	հրաբխային խարամ	363,323.0	10,010,002.0	1.0
	4	տուֆ	225,941.0	813,976.0	2.0
	5	օբսիդիան	0.0	29,948.0	
		Ընդհանուր	658,959.0	12,393,139.0	6.0

Աղյուսակ 28

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավակ մ³	Վնաս	Քանակ
Արարատ	1	հողագրունտ	548.0	620,672.0	2
	2	ԱԿԽ	332,739.0	11,304,566.0	10.0
	3	խճաքար	155.0	0.0	1.0

	4	մարմարցված կրաքար	41,083.0	0.0	1.0
	5	տրավերտին	5,662.0	15,591.0	2.0
		Ընդհանուր	380,187.0	11,940,829.0	16.0

Աղյուսակ 29

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Գեղարքունիք	1	բազալտ	504,789.0	13,449,558.0	11.0
	2	խիճ	25,065.0	0.0	1.0
	3	սևահող	134.0	0.0	1.0
	4	ԱԿԽ	124,870.0	23,752.0	6.0
		Ընդհանուր	654,858.0	13,473,310.0	19.0

Աղյուսակ 30

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Լոռի	1	բազալտ	124,494.0	109,412,418.0	6.0
	2	ԱԿԽ	19,385.0	15,340,022.0	5.0
	3	հողագրունտ	4,543.0	374,479.0	2.0
	4	տորֆ	13,925.0	54,307,500.0	1.0
	5	դոլերիտ	1,884.0	0.0	1.0
	6	սևահող	15,513.0	592,755.0	1.0
		Ընդհանուր	179,744.0	180,027,174.0	16.0

Աղյուսակ 31

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Կոտայք	1	ԱԿԽ		265,350.0	
	2	բազալտ	563,722.0	23,892,911.0	6.0
	3	մարմար	20,085.0	114,954.0	1.0
	4	լիթոիդային պեմզա	406,809.0	8,317,134.0	4.0
	5	հող	4,452,629.0	16,376,164.0	1.0

	6	սևահող	7,663.0	1,854,089.0	2.0
		Ընդհանուր	5,450,908.0	50,820,602.0	14.0

Աղյուսակ 32

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Շիրակ	1	ԱԿԽ	312,442.0	15,250,473.0	2.0
	2	տուֆ			
	3	շիկահող	9.0	2 943.0	1.0
	4	բազալտ	21,475.0	962,513.0	1.0
		Ընդհանուր	333,926.0	16,215,929.0	4.0

Աղյուսակ 33

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Սյունիք	1	խիճ	62,364.0	32,820,157.0	1.0
	2	ԱԿԽ	717,792.0	12,994,820.0	9.0
	3	բրեկչա	132,322.0	0.0	1.0
	4	հրաբխային խարամ	2,739,402.0	46,428,122.9	12.0
	5	շիկահող	4,182.0	700,854.0	1.0
	6	բազալտ	196,781.0	6,361,985.0	17.0
		Ընդհանուր	3,852,843.0	99,305,938.9	41.0

Աղյուսակ 34

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Վայոց ձոր	1	ԱԿԽ	7,398.0	326,270.0	3.0
	2	բազալտանման խիճ	16,761.0	703,972.0	4.0
		Ընդհանուր	24,159.0	1,030,242.0	7.0

Աղյուսակ 35

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Տավուշ	1	ԱԿԽ	622.0	130,464.0	1.0
	2	հող	43,305.0	321,753.0	2.0
	3	գաբրոբազալտ	7,583.0	5,338,097.0	1.0
	4	բազալտ	384,923.0	98,685,678.0	14.0
	5	մարմարեցված կրաքար	105,142.0	109,663,936.0	3.0
		Ընդհանուր	541,575.0	214,139,928.0	21.0

Աղյուսակ 36

Մարզ	Հ/Հ	Օգտակար հանածոյի անվանում	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
Երևան	1	բազալտ	116,899.0	1,187,483 601.0	1.0
		Ընդհանուր	116,899.0	1,187,483,601.0	1.0

Աղյուսակ 37

Հ/Հ	Մարզ	Ծավալ մ³	Վնաս	Քանակ
1	Արմավիր	1,870,951.0	73,683,655.0	33.0
2	Արագածոտն	658,959.0	12,393,139.0	6.0
3	Արարատ	380,187.0	11,940,829.0	16.0
4	Գեղարքունիք	654,858.0	13,473,310.0	19.0
5	Լոռի	179,744.0	180,027,174.0	16.0
6	Կոտայք	5,450,908.0	50,820,602.0	14.0
7	Շիրակ	333,926.0	16,215,929.0	4.0
8	Սյունիք	3,852,843.0	99,305,938.9	41.0
9	Վայոց ձոր	24,159.0	1,030,242.0	7.0
10	Տավուշ	541,575.0	214,139,928.0	21.0
11	Երևան	116,899.0	1,187,483,601.0	1.0
Ընդհանուր		**14,065,009.0**	**1,860,514,347.9**	**178.0**

Վերոնշյալ բոլոր դեպքերով նյութերն ուղարկվել են Իրավապահ մարմիններին՝ հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

Միաժամանակ, Քննչական կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ ԲԸՏՄ կողմից ներկայացված հաղորդումների հիման վրա Քննչական կոմիտեի կողմից հարուցված քրեական վարույթների շրջանակներում 2024-2025 թվականների ընթացքում հաշվարկված պետությանը պատճառված վնասը կազմում է 12,897,198,037.0 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 460,417,195.0 ՀՀ դրամ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից պետությանը պատճառված վնասը կազմում է՝ 26,369,045,787.0 ՀՀ դրամ:

Արաքսի ավազանում իրականացված միջոցառումներ

Արարատի մարզի Արաքս գետի ողողատում գտնվող մոտ 3.5 կմ երկարությամբ տարածքում չափագրվել է մոտ 100 հեկտար տարածք:

Արդյունքում ընդհանուր 89,777 մ^2 մակերեսով տարածք ենթարկվել է դեգրադացիայի և ապօրինի տեղահանվել է 110,351 մ^3 ծավալով ավազակոպճային խառնուրդի լեռնային զանգված:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության գործողություններ

2025 թվականին Երևանի պետական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է ԲԸՏՄ աշխատակիցներին աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) ուսուցում:

GIS-ը աշխարհագրական տեղեկատվական համակարգ է տարածական և աշխարհագրական տվյալների հավաքագրման, պահպանման, վերլուծության, կառավարման և վիզուալացման համար: Այն թույլ է տալիս աշխատել տվյալների հետ, որոնք կապված են Երկրի վրա օբյեկտների գտնվելու վայրի հետ, ինչպիսիք են կոորդինատները, հասցեները, երթուղիները, լանդշաֆտի առանձնահատկությունները և այլն: Կիրառություններն են՝

- քարտեզագրություն և քարտեզների պատրաստում, քարտեզների վրա տվյալների պատկերում,
- տարածական վերլուծություն տարբեր աշխարհագրական օբյեկտների միջև փոխհարաբերությունների վերլուծություն,
- բնական ռեսուրսների կառավարում՝ հողի, ջրի, անտառների և այլ ռեսուրսների օգտագործման մոնիտորինգ և կառավարում:

Առավել հաճախ արձանագրված խախտումները

Վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրվել են ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի շեղումներ, մասնավորապես.

- ընդերքօգտագործման աշխատանքներն իրականացվել են առանց հողատարածքի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելու: Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանված է, որ ընդերքի օգտագործման իրավունք ստացած անձը չի կարող սկսել հանքարդյունահանման աշխատանքներն առանց տվյալ տարածքի սեփականատիրոջ համապատասխան համաձայնության կամ հողատարածքի օգտագործման պայմանագրի:
- ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող ընկերությունները ընդերքօգտագործման ընթացքում չեն ապահովում երկրաբանական և մարկշեյդերական փաստագրության վարման լիարժեքությունը, օգտակար հանածոների պաշարների շարժի հաշվառման իրականացման և տեղեկատվության ներկայացման սահմանված պահանջների կատարումը: Երկրաբանական և մարկշեյդերական քարտեզագրումները (երկրաբանական քարտեզներ՝ երկրակեղևի որևէ տեղամասի երկրաբանական կառուցվածքը արտահայտող գծագրեր, մարկշեյդերական գործ՝ հանքափորվածքներում կատարված տարածական-երկրաչափական չափումների տվյալները՝ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ ու դրանց փաստաթղթավորումը) ունեն առանցքային նշանակություն հանքարդյունաբերության մեջ:
- ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից չեն պահպանվում հանքերի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծով սահմանված հանքաստիճանի և հանքախորշի բարձրությունը, լայնությունը, խորությունը և երկարությունը:
- ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընկերությունների կողմից չեն ներկայացվում ընդերքօգտագործման վճարների (պետական տուրքերի), «Օգտակար հանածոների կորզումն արդյունահանման ժամանակ» Ձև N 70-ՏԱ» և «Օգտակար հանածոների հարստացման, մետաղագործական վերափոխման, մակաբացված ապարների և

արտադրական լցակույտերի համալիր օգտագործման մասին» Ձև N 71-ՏԱ» տարեկան վարչական վիճակագրական հաշվետվությունները:

Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծերի բոլոր այս խախտումները հանգեցնում են հանքերի ոչ ճիշտ և լիարժեք շահագործմանը, որի համար անհրաժեշտ է կարգավորել օրենսդրական բացերը՝ սահմանելով խիստ պատասխանատվության միջոցներ: Միաժամանակ անհրաժեշտ է երկրաբանական և այլ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և ներկայացման նպատակով տեղեկատվությունը թվայնացնել և ստեղծել կառավարման ավտոմատ տեղեկատվական համակարգ:

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում ԼՀԲ մասնակցել է ԲԸՏՄ կողմից իրականացվող 72 ստուգումներին՝ կատարելով մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի չափագրում և արտահոսքի ջրերի նմուշառում: ԼՀԲ աշխատակիցների կողմից վերցվել է ջրի 37, հողի՝ 52 նմուշ և կատարվել է փոշու և գազային միացությունների 457 չափագրում: ԲԸՏՄ աշխատակիցների կողմից վերցվել է ջրի 156 և հողի՝ 42 նմուշ: ԼՀԲ կողմից իրականացվել է 2,146 անալիտիկ հետազոտություն և չափագրում, որից ջրի 193 նմուշի 1,269 անալիզ

- հողի 94 նմուշի 420 անալիզ
- մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի 457 չափագրում, որից 265-ը փոշի և մուր, 192-ը՝ գազային միացություններ: Փոշու և այլ վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների չափաքանակները մինչև 5 անգամ գերազանցել են 68, 5-ից ավել անգամ՝ 27 պարամետր, ինչը պայմանավորված է փոշենստեցման և փոշեկլանման միջոցառումների չիրականացմամբ:

Ջրի նմուշներում որոշված 1,269 պարամետրերից 162 պարամետր գերազանցել է սահմանային թույլատրելի արտահոսքը մինչև 5 անգամ, 230 պարամետր՝ 5-ից ավել անգամ: Հողի նմուշներում 14 պարամետր գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան:

Նույնականացման և աղտոտումը պարզելու նպատակով անալիտիկ հետազոտություններ են իրականացվել հողի բերրի շերտի ապօրինի տեղափոխման կանխարգելիչ միջոցառումների ընթացքում և վնասված ծառերի բնաբաժակներից վերցրած հողերի նմուշներում:

Կատարված հետազոտությունները՝ ըստ 2022-2025 թվականների համեմատականի

Աղյուսակ 38

Տարի			2022	2023	2024	2025
Մթնոլորտային օդի	**քանակը**		**49**	**115**	**30**	**457**
	ՍԹԱ չափաքանակները գերազանցել է	մինչև 5 անգամ	6	7	3	68
		5 և ավել անգամ	0	5	3	27
Ջրի	**քանակը**		**479**	**585**	**252**	**1269**
	ԹՍԱ չափաքանակները գերազանցել է	մինչև 5 անգամ	47	40	11	162
		5 և ավել անգամ	57	42	3	230
Հողի	**քանակը**		**36**	**264**	**74**	**420**
	վնասակար նյութերի պարունակությունը գերազանցել է ՍԹԿ		0	0	3	14

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- ԲԸՏՄ գործունեության վերաբերյալ, ըստ ոլորտների տարեկան ծրագրով նախատեսված 48 իրազեկման աշխատանքի փոխարեն կատարվել է 215-ը, այդ թվում՝ 133-ը մամուլի հաղորդագրություն, տեղեկատվական 27 նյութ, թափուր պաշտոնի մասին 55 հայտարարություն:

Աղյուսակ 39

Տարեթիվ	Նախատեսված	Իրականացված	ՀԼՄ-ներում տարածում
2022	15	90	1,373
2023	15	216	1,486
2024	40	167	2,087
2025	48	215	2,840

Երևան քաղաքում կազմակերպվել է 2 իրազեկում-հանդիպում՝ մայրաքաղաքում լայնածավալ շինարարական աշխատանքներ իրականացնող 32 կազմակերպության ներկայացուցիչների հետ:

Հանդիպումներին ներկա են եղել ԲԸՏՄ ղեկավար կազմը, Երևանի քաղաքապետարանի, Շինարարների միության, Կառուցապատողների հայկական ասոցիացիայի, Շրջակա միջավայրի նախարարության պատասխանատուներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են շինհրապարակներում փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների կիրառման, շինհրապարակների կահավորման և փոշու արտանետումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտությունը, ներկայացվել են բնապահպանական օրենսդրությամբ սահմանված պահանջները: Տրամադրվել են իրազեկման թերթիկներ, բուկլետներ: Հանդիպումները լուսաբանվել են Հանրային հեռուստաընկերությամբ:

- ԲԸՏՄ վերահսկողության ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների, անտառտնտեսության մասնաճյուղերի, համայնքային կոմունալ տնտեսությունների, ակտիվ քաղաքացիների, բնապահպանների և հասարակական կազմակերպությունների 136 ներկայացուցչի հետ Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Շիրակի, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերում կազմակերպվել են իրազեկում-հանդիպումներ:

Հանդիպումների նպատակն է վերահսկողության գործընթացներում թափանցիկության բարձրացումը, շրջակա միջավայրին հասցվող վնասների նվազեցումը, օրենսդրական պահանջների իրազեկման մակարդակի ամրապնդումը:

Հանդիպումներին ներկայացվել են ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ», «Ջրային» օրենսգրքերում, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Թափոնների մասին» ՀՀ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխություններն ու լրացումները: Տրամադրվել են ուղեցույցեր, իրազեկման թերթիկներ, բուկլետներ:

Քննարկվել են մարզերում առկա բնապահպանական խնդիրները, աղբի, տերևների այրման հետևանքով մթնոլորտային օդի աղտոտման, հրդեհների կանխարգելման, թափուկ փայտանյութի բացթողնման վերաբերյալ հարցեր, ներկայացվել դրանց լուծմանն ուղղված առաջարկներ, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների գործունեության հետևանքով առաջացող խախտումները կանխարգելող միջոցառումներ:

- ԲԸՏՄ կողմից կազմակերպվել է հանդիպում հասարակական կազմակերպության ներկայացուցիչների, բնապահպանների և ակտիվ քաղաքացիների հետ, որին մասնակցել է 18 ներկայացուցիչ:

Հանդիպման նպատակն է ներկայացնել ՀՀ տարածքում արձանագրված բնապահպանական խախտումների ընդհանուր պատկերը, վերհանել ոլորտում առկա համակարգային խնդիրները, քննարկել այն կանխարգելիչ միջոցառումները, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրավախախտումների նվազեցմանը, ինչպես նաև ընդգծվել է Հ/Կ-ների, բնապահպանների և ակտիվ քաղաքացիների հետ համագործակցության կարևորությունը՝ բնապահպանական իրավախախտումների կանխման, արագ արձագանքման և հանրային վերահսկողության ամրապնդման գործընթացում:

Ներկայացվել են վերջին շրջանում իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքները, ստացվող ահազանգերով բարձրացված խնդիրները, իրավական կարգավորումների փոփոխությունների ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են բնապահպանական վերահսկողության արդի խնդիրները, շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող օրենսդրական բացերը, հանրության մասնակցության ընդլայնման հնարավորությունները, ինչպես նաև վերահսկողական

գործառույթների արդյունավետության բարձրացման ուղիները, բնապահպանական խնդիրների արձանագրման, հաղորդման և պատշաճ արձագանքման մեխանիզմները:

➢ ՀՀ կառավարության նիստերի ընթացքում ՀՀ վարչապետի կողմից պետական կառավարման համակարգի մարմինների ղեկավարներին տրված հանձնարարականների կատարումն ապահովելու նպատակով 2025 թվականին ԲԸՏՄ ղեկավարը և ղեկավարի տեղակալները ՀՀ բոլոր մարզերի տարբեր համայնքներում ունեցել են 31 հանդիպում մարզպետների, տեղական ինքնակառավարման մարմինների, ՆԳՆ մարզային ոստիկանության, փրկարար ծառայության ներկայացուցիչների, ավագանու անդամների, ակտիվ բնակիչների և այլ շահագրգիռ անձանց հետ:

Հանդիպումների ընթացքում քննարկվել են ոլորտում արձանագրված հիմնական ռիսկերն ու խախտումները, խոզանների, եղեգների, չորացած տերևների, բուսական մնացորդների, աղբավայրերի այրումների, սեզոնային հրդեհների չեզոքացման, թափոնաջրերով գետերի աղտոտման, ընդերքօգտագործման, սորուն նյութերի տեղափոխման, ճանապարհաշինարարական աշխատանքների ընթացքում փոշու արտանետումների նվազեցման, հողագրունտի հանույթի օգտագործման և տեղափոխման, ջրօգտագործման թույլտվությունների ձեռքբերման, ապօրինի ծառահատումների, ապօրինի որսի և ձկնորսության դեպքերի կանխարգելման, աղբավայրերի շահագործման և մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ հարցեր, ինչպես նաև կարևորվել է ընդերքօգտագործման իրավունքով սահմանված տեղամասերից դուրս իրականացվող ապօրինի տեղահանումների բացառման անհրաժեշտությունը:

Հանդիպումների նպատակն է բարձրացնել իրազեկվածությունը բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, խթանել հանրության, պետական ու մասնավոր հատվածների միջև փոխգործակցությունը՝ տնտեսական զարգացմանը զուգահեռ անվտանգ շրջակա միջավայր ապահովելու հարցում:

➢ Սոցիալական հարթակների ԲԸՏՄ էջերի, պաշտոնական կայքի և ԶԼՄ-ների միջոցով հրապարակվել է 21 իրազեկող կանխարգելիչ հիշեցում, մասնավորապես՝

- «Տերևաթափից առաջացած թափոնների այրման»,
- «Խոզանների այրման բացասական հետևանքների»,

- «Թափոնների, բուսածածկույթի այրման վտանգների ու հետևանքների»,
- «Բուսածածկույթի մնացորդները չայրելու»,
- «ՎԻՎՕ-ով նախատեսված տուգանքների»,
- «ՀՀ տարածքում (բացի բնության հատուկ պահպանվող տարածքներից) որսի կենդանիների համար թույլատրելի չափաքանակների ու ժամկետների»,
- «Անտառային և բուսածածկ տարածքներում հրդեհներից խուսափելու» վերաբերյալ,
- «Մթնոլորտային օդի պահպանության» օրենքի պահանջների վերաբերյալ:

➢ Օդի աղտոտման նվազեցմանն ուղղված միջոցառումների շրջանակում պատրաստվել է խոզանների, բուսական մնացորդների այրման կանխարգելման վերաբերյալ 69 վայրկյան տևողությամբ սոցիալական-տեղեկատվական տեսահոլովակ, որը 2025 թվականի ապրիլի 7-ից շուրջ 1.5 ամիս հեռարձակվել է Հանրային հեռուստատեսությամբ, իսկ ՀՀ մարզային հեռուստաալիքներով (բացի՝ Արարատ և Կոտայք TV-ներից) ապրիլի 28-ից՝ 2 շաբաթ ժամկետով:

➢ Բնապահպանական իրավախախտումների կանխարգելման նպատակով հանրապետության ողջ տարածքում իրականացվող ապօրինի փայտանյութի, հողի բերրի շերտի, առանց անթափանց ծածկոցի, սորուն նյութերի տեղափոխման կանխարգելիչ ստուգայցերի ընթացքում իրականացվել են իրազեկման ու բացատրական աշխատանքներ, տրամադրվել իրազեկման թերթիկներ:

ԲԸՏՄ ղեկավարը դասախոսությամբ հանդես է եկել Երևանի պետական համալսարանի Ա. Իսկոյանի անվան էկոլոգիական իրավունքի կենտրոնում:

Դասախոսությանը մասնակցել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի և բակալավրի 3-րդ կուրսի ուսանողները՝ ՀՀ էկոլոգիական իրավունք դասընթացի շրջանակներում: ԲԸՏՄ ղեկավարը ներկայացրել է վերահսկողության հիմնական ուղղություններն ու ձևերը, մանրամասն քննարկել ոլորտի ընթացիկ վիճակը, պատասխանել ուսանողների հնչեցրած հարցերին:

➢ ԲԸՏՄ ղեկավարը այցելել է Արագածոտնի մարզի Թալին խոշորացված համայնքի Կաթնաղբյուր գյուղի Մուշեղ Գալշոյանի անվան միջնակարգ դպրոց, Երևանի Գալուստ Գյուլբենկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց, Տավուշի մարզի սահմանամերձ Կիրանցի դպրոց, էկոկրթական հանդիպումներ ունեցել ուսուցչական կազմի ու աշակերտների հետ:

Ղեկավարը ներկայացրել է շրջակա միջավայրի պահպանության, Հայաստանի բնաշխարհի արժեքների, ապօրինի որսի կանխարգելման, ջրային ռեսուրսների խնայողության և օդի աղտոտման դեմ պայքարի կարևորությունը, ներկայացրել կրթությունը, որպես պետության զարգացման հիմք: Աշակերտներն ակտիվ հարցադրումներով կիսվել են իրենց պատկերացումներով՝ բնության պահպանության մասին:

- ԲԸՏՄ ղեկավար կազմն այցելել է մայրաքաղաքի ու հանրապետության մարզերի 30-ից ավելի ավագ և հիմնական դպրոցներ:

Հանդիպումների ընթացքում տարբեր դասարանների աշակերտների հետ ինտերակտիվ քննարկումներ են եղել բնապահպանական հիմնախնդիրների, Հայաստանում առկա էկոլոգիական մարտահրավերների, շրջակա միջավայրի պահպանության գործում յուրաքանչյուր քաղաքացու դերի կարևորության վերաբերյալ:

Դպրոցականներին առաջարկվել է իրենց համայնքներում լինել բնապահպանական փոփոխությունների շարժիչ ուժ և սեփական վարքով ու հնարավոր ազդեցությամբ օրինակ հանդիսանալ շրջապատին:

- ԲԸՏՄ կողմից կազմակերպվել է 13 ուսանողի մասնագիտական պրակտիկայի անցկացում.
  - Երևանի պետական համալսարանի կենսաբանության, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետների 4-րդ կուրսի 10 ուսանողի վեցշաբաթյա մասնագիտական պրակտիկա,
  - Կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի հեռակա ուսուցման 5-րդ կուրսի 2 ուսանողի վեցշաբաթյա մասնագիտական պրակտիկա,
  - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի 1 ուսանողի տասշաբաթյա մասնագիտական պրակտիկա:

- Ամենօրյա մոնիտորինգի արդյունքներով ուսումնասիրվել է ոլորտի վերաբերյալ 2182 նյութ, որոնք ամփոփվել և վերլուծվել են, պատրաստվել է օրվա մամուլի տեսություն, ստեղծվել համակարգված արխիվ (2024թ.-ին՝ 1,772, 2023թ.-ին՝ 1,354):

Անդրադարձներն ըստ լրատվամիջոցների.



- ԲԸՏՄ ֆեյսբուքյան պաշտոնական էջում հրապարակվել է 26 տեսանյութ:
- 2025թ.-ին բացված ԲԸՏՄ տելեգրամյան ալիքում հրապարակվել է 51 նյութ:
- Յութուբյան ալիքի ԲԸՏՄ էջում հրապարակվել է 27 տեսահոլովակ/տեսանյութ (2024թ.-ին՝ 32, 2023թ.-ին՝ 39):

ԲԸՏՄ ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ նախատեսված 8 հարցազրույցի և/կամ մամուլի ասուլիսների փոխարեն կազմակերպվել է 31-ը՝ 3 մամուլի ասուլիս և 28 հարցազրույց (2024թ.-ին նախատեսվել է 4, իրականացվել՝ 28, 2023թ.-ին նախատեսվել է 4, իրականացվել՝ 23):

- Արմենպրես լրատվական գործակալությունում կազմակերպված ասուլիսներ.
  - 2025թ. հունվարի 10-ին՝ 2024թ.-ի ընթացքում ԲԸՏՄ կողմից կատարված աշխատանքների ամփոփման վերաբերյալ:
  - 2025թ. հունվարի 21-ին՝ Սևանա լճում սիգի ձվադրման ժամանակահատվածով պայմանավորված միջոցառումների ամփոփման վերաբերյալ:

- 2025թ. նոյեմբերի 26-ին՝ տերևների այրման հետևանքով մթնոլորտային օդի աղտոտման համար նախատեսված տուգանքների չափերի վերաբերյալ:

➢ ԲԸՏՄ ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց հետ կազմակերպված 28 հարցազրույցից Հանրային հեռուստատեսությամբ հեռարձակվել է 19, հարցազրույցներ են տրվել նաև Ֆակտոր, Հետք, Հանրային ռադիո, Ազատություն, Պանորամա, Ռադար և այլ ԶԼՄ-ների:

2024թ. տարեկան և 2025թ. 1-ին կիսամյակի ընթացքում ԲԸՏՄ ստացված վարչական վարույթների, դիմում-բողոքների, ահազանգերի վերաբերյալ վիճակագրական տվյալները սահմանված ժամկետում հրապարակվել են ԲԸՏՄ պաշտոնական կայքէջի «Վիճակագրություն» և «Հաշվետվություններ» բաժիններում (հղումներ՝ https://www.ecoinspect.am/hy/statistics, https://www.ecoinspect.am/hy/reports):

➢ ԻՀՀՏԱ բաժնում գրանցվել է 1,631 ահազանգ, որից թեժ գծի միջոցով՝ 1,293, ԶԼՄ և սոց.ցանցերով՝ 338, մասնավորապես

- 1,573-ով կազմվել են զեկուցագրեր՝ հարուցվել վարչական վարույթներ, որից թեժ գծի միջոցով՝ 1,235, ԶԼՄ և սոց.ցանցերով՝ 338,
- 58-ով՝ խորհրդատվություն և վերահասցեագրում (միայն թեժ գիծ):

Ահազանգերի թվաքանակ

Աղյուսակ 40

Տարեթիվ	Ահազանգերի քանակ	Թեժ գծով	Սոց ցանցեր ԶԼՄ հրապարակումներ
2022	219	151	68
2023	391	276	115
2024	550	430	120
2025	1631	1,293	338

Թեժ գծով ստացված ահազանգերն ըստ ուղղությունների

Աղյուսակ 41

Տարեթիվ	Ահազանգերի քանակ	Կենսաբազմա-զանություն	Շրջակա միջավայր	այլ	Խորհրդատ-վություն
2022	151	44	19	11	77
2023	276	40	120	34	82
2024	430	34	241	-	155
2025	1,293	61	1,172	2	58

Սոց ցանցեր ՀԼՄ հրապարակումների հիման վրա գրանցված ահազանգերն ըստ ուղղությունների

Աղյուսակ 42

Տարեթիվ	Ահազանգերի քանակ	Կենսա-բազմազանություն	Շրջակա միջավայր
2022	68	39	29
2023	115	51	64
2024	120	36	84
2025	338	58	280

➢ ԲԸՏՄ պաշտոնական կայքէջում թարմացվել են «Գործունեության ծրագիր», «Հաշվետվություններ», «Վիճակագրություն», «Կառուցվածք», «Կառավարման խորհուրդ», «Նորություններ», «Թափուր պաշտոններ», «Տեսանյութեր», «Իրազեկում» և այլ բաժինները: Ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը, հետադարձ կապը, ԲԸՏՄ գործունեության թափանցիկությունը: ԲԸՏՄ պաշտոնական էջում տեղադրվել են մամուլի հաղորդագրություններ, տեսանյութեր, պարզաբանումներ, հաշվետվություններ, իրազեկումներ, հայտարարություններ և այլն:

➢ Սոցիալական ցանցի ԲԸՏՄ պաշտոնական էջի հետևորդների թիվը 2025 թվականին կազմել է՝ 8541 (2024թ.-ին՝ 7,241, 2023թ.-ին՝ 7,044):

➢ ԲԸՏՄ ու ԵՊՀ համագործակցության շրջանակներում GIS աշխարհագրական տեղեկատվական համակարգի ուսուցման ծրագրով վերապատրաստվել է 8 տեսուչ:

➢ ԲԸՏՄ և ՆԳՆ կրթահամալիրի բազմամյա համագործակցության արդյունքում մշակված հատուկ մասնագիտական մոդուլային ծրագրի շրջանակում այս տարի ևս վերապատրաստվել է 44 տեսուչ :

Կրթական մոդուլներում ներառված են եղել ԲԸՏՄ վերահսկողության ընթացքում ի հայտ եկած թերացումների ու բացերի վերացմանն ուղղված անհրաժեշտ թեմաներ:

➢ Կազմակերպվել է Կովկասի բնության հիմնադրամի կողմից ԲԸՏՄ նվիրաբերված նորագույն տեխնիկական միջոցների փոխանցումը:

➢ 2025 թվականի ընթացքում ԲԸՏՄ ղեկավարի հետ հանդիպման հայտ է ներկայացրել չորս քաղաքացի, բոլոր՝ 4 հանդիպումները կազմակերպվել են սահմանված կարգի համաձայն:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

2025 թվականի ընթացքում ԲԸՏՄ ակտիվորեն զարգացրել է միջազգային համագործակցությունը՝ միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ ձեռք բերելով համագործակցության հաստատման և առաջմղման վերաբերյալ պայմանավորվածություններ:

Մասնակցություն ՍԻԹԵՍ կոնվենցիայի Կողմերի 20-րդ համաժողովին (COP 20)

2025 թվականի նոյեմբերի 22-ից նոյեմբերի 25-ը ԲԸՏՄ ղեկավարը մասնակցել է Ուզբեկստանի Հանրապետության Սամարխանդ քաղաքում անցկացված «Անհետացման եզրին գտնվող վայրի բուսական և կենդանական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի (ՍԻԹԵՍ) կողմերի 20-րդ համաժողովի (COP 20) բարձրաստիճան հատվածի հանդիպումներին:

Համաժողովի ընթացքում հիմնականում քննարկվել են՝

վտանգված տեսակների միջազգային առևտրի վերահսկողության գլոբալ միտումները, դրանց պահպանության ուղղությամբ երկրների պարտավորությունների կատարելագործումը և իրավակիրարկման գործողությունների ուժեղացման անհրաժեշտությունը,

➢ ՍԻԹԵՍ-ի ռազմավարական տեսլականը, որը համադրում է Կոնվենցիայի առաջնահերթությունները կենսաբազմազանության համաշխարհային պարտավորությունների նպատակների և խնդիրների հետ,

➢ Կոնվենցիայի կարողությունների զարգացման շրջանակային ծրագիրը,

➢ պահանջարկի նվազեցման ռազմավարությունների արդիականությունը՝ ուղղված սպառողների վարքագծի փոփոխությանը և անօրինական վայրի բնության արտադրանքներից հրաժարման խթանմանը:

Համաժողովի շրջանակներում կայացել են մի շարք երկկողմ հանդիպումներ.

➢ Վայրի բնության դեմ հանցագործությունների պայքարի միջազգային կոնսորցիումի (ICCWC) համակարգող Էդվարդ Վան Աշի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է ՀՀ և ICCWC-ի միջև հետագա համագործակցության ձևավորումը, ինչպես նաև ՀՀ՝ կոնսորցիումին միանալու գործընթացի մեկնարկը: Ձեռք է բերվել պայմանավորվածություն, ըստ որի՝ հայկական կողմը ՍԻԹԵՍ կոնվենցիայի կառավարող մարմնի՝ Շրջակա միջավայրի նախարարության միջոցով, ICCWC-ին անդամակցելու վերաբերյալ կուղարկի պաշտոնական գրություն: Այդ քայլից հետո կմեկնարկի Հայաստանի անդամակցության գործընթացը: Այդ գործընթացի համակարգումը կիրականացվի ԲԸՏՄ կողմից՝ որպես ՀՀ առաջատար պետական մարմին վայրի բնության պահպանության իրավակիրարկման ոլորտում: ICCWC-ն աջակցում է երկրների իրավապահ և վերահսկող մարմիններին՝ զարգացնելու իրավական, տեխնիկական և կառավարչական կարողությունները վայրի բնության հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի համար: Հարկ է նշել, որ ԲԸՏՄ դիմել է ՍԻԹԵՍ կոնվենցիայի Լիազոր մարմնին՝ հետաքրքրության պաշտոնական գրությունը Կոնվենցիայի քարտուղարություն ներկայացնելու խնդրանքով: Գործընթացը գտնվում է իրականացման փուլում:

- Ղազախստանի Հանրապետության էկոլոգիայի և բնական պաշարների նախարարության անտառների և վայրի բնության կոմիտեի ղեկավար Դանիյար Տուրգամբաևի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության ընդլայնման հնարավորությունները վայրի բնության պահպանության, անտառների կայուն կառավարման և վերահսկողության համակարգերի թվայնացման ուղղություններով: Ղազախական կողմը պատրաստակամություն է հայտնել աջակցել Հայաստանին վերահսկողական համակարգերի արդիականացման և թվայնացման գործընթացում՝ ներկայացնելով իր առաջատար փորձը:
- Ուզբեկստանի Հանրապետության էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության նախարարության անտառային գործակալության դեղաբույսերի մշակման և վերամշակման գիտաարտադրական կենտրոնի ղեկավար Բախրոմ Իզբասարովի հետ հանդիպման արդյունքում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: Փաստաթուղթը նախատեսում է

ընդլայնել համագործակցությունը կենսաբազմազանության պահպանության ոլորտում, իրականացնել գիտական հետազոտություններ, տեխնոլոգիական փոխանակում և կարողությունների զարգացման համատեղ ծրագրեր, ինչպես նաև ստեղծել փորձագիտական համագործակցության մեխանիզմներ կենսառեսուրսների կայուն կառավարման, բնական պաշարների պահպանության և վերահսկողության ոլորտներում:

Մասնակցություն միջազգային հանքարդյունաբերական համաժողովին

2025 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը ԲԸՏՄ ղեկավարը մասնակցել է Միացյալ Թագավորության մայրաքաղաք Լոնդոնում կայացած «Ապագայի ռեսուրսների ապահովում» խորագրով միջազգային հանքարդյունաբերական համաժողովին:

Համաժողովի նպատակն էր միավորել հանքարդյունաբերության, էներգետիկայի և բնապահպանական կառավարման ոլորտների պետական, մասնավոր և գիտական կառույցների ներկայացուցիչներին՝ քննարկելու կայուն զարգացման, պատասխանատու հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի պահպանության արդիական մարտահրավերներն ու հնարավորությունները:

Հայկական պատվիրակության կազմում ԲԸՏՄ ղեկավարը մասնակցել է հետևյալ հանդիպումներին.

- Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ICMM) նախագահ և գործադիր տնօրեն Ռոհիտեշ Դհավանի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման միջազգային չափանիշների ներդրման, բնապահպանական ռիսկերի նվազեցման, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցերը: Ներկայացվել է, որ ՀՀ կառավարությունը հաստատել է հանքարդյունաբերության զարգացման ռազմավարությունը և գործողությունների պլանը, որոնցով սահմանվում են ոլորտում միջազգային չափանիշների ներդրման ռազմավարական նպատակները: Անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի՝ CRIRSCO-ին անդամակցելու նպատակադրվածությանը, տեխնոլոգիական և տվյալների կառավարման բարեփոխումներին, ինչպես նաև արդեն ներդրված միջազգային ստանդարտներին:
- ԱՄՆ Պետդեպարտամենտի Եվրոպայի, Եվրասիայի և Կենտրոնական Ասիայի բյուրոյի ԱՄՆ աջակցության ժամանակավոր համակարգող Քրիսթեն Սելենջերի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է Հայաստանում փոքր մոդուլային ռեակտորների կիրառման

հնարավորությունը, ինչպես նաև ԱՄՆ փորձը, տեխնոլոգիական լուծումները և համագործակցության հնարավոր ձևաչափերը: Անդրադարձ է կատարվել նաև երկրաբանական ծառայությունների ստեղծման ուղղությամբ Հայաստանի ծրագրերին և ԱՄՆ Երկրաբանական ծառայության հետ հնարավոր համագործակցությանը:

- SLR Consulting ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկվել են հանքարդյունաբերության ոլորտում միջազգային չափանիշների կիրառման հնարավորությունները՝ բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման, թափոնների կառավարման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կլիմայական ռիսկերի նվազեցման համատեքստում:
- Միացյալ Թագավորության արտաքին գործերի գրասենյակի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի վարչության պետի տեղակալ Մարկ Քլեյթոնի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են TRIPP նախաձեռնությանը, «Խաղաղության խաչմերուկ» ծրագրին և տարածաշրջանային խաղաղությանը վերաբերող հարցեր:

COP 17 համաժողովի նախապատրաստական աշխատանքներ

2026 թվականի հոկտեմբերին ՀՀ անցկացվելու է ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP 17): ԲԸՏՄ-ն ընդգրկված է վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 26-ի № 1069-Ա որոշմամբ ստեղծված COP 17 համաժողովի կազմակերպման և անցկացման կոմիտեի կազմում:

Հաշվի առնելով, որ COP 17-ի հյուրընկալումը հանդիսանում է կենսաբազմազանության պահպանության ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կարևոր արտահայտություն, ԲԸՏՄ շարունակական կերպով ուժեղացնում է վերահսկողական և կանխարգելիչ միջոցառումները՝ ուղղված վայրի կենդանիների անօրինական առևտրի կանխարգելմանը և անազատության մեջ պահման դեպքերի դեմ պայքարին: Այս միջոցառումները ԲԸՏՄ կողմից սահմանված են որպես գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը:

COP 17-ի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում ԲԸՏՄ ներկայացուցիչները մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության և միջազգային գործընկեր կազմակերպությունների կողմից կազմակերպված մի շարք սեմինարների, իրազեկման բարձրացման աշխատաժողովների և քննարկումների:

Համագործակցային հարաբերություններ միջազգային կազմակերպությունների (CNF և WWF) հետ

Կարողությունների զարգացման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (CNF և WWF) հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու և ամրապնդելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ-ում գործող մի շարք միջազգային կառույցների հետ ձեռք է բերվել փոխհամագործակցության պայմանավորվածություններ՝ ԲԸՏՄ կարողությունների զարգացման, տեղեկատվության փոխանակման, մասնագետների վերապատրաստման, տեխնիկական աջակցության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Կովկասի Բնության Հիմնադրամի կողմից ԲԸՏՄ նվիրաբերվել է 22,180,000 ՀՀ դրամ գումարի չափով գույք, մասնավորապես՝

- Անօդաչու թռչող սարք DJI Matrice 30T և լիցքավորիչ կայան DJI BS30 – 1
- Անօդաչու թռչող սարքի մարտկոց DJI TB30 – 6
- Անօդաչու թռչող սարք DJI Matrice 4T – 1
- DJI Matrice 4T անօդաչու թռչող սարքի մարտկոց - 1
- DJI Matrice 4T անօդաչու թռչող սարքի մարտկոց – 2
- Դյուրակիր համակարգիչ Dell Pro 16 PC16250 / 16.0 FHD+ / IntelCore 5 120U /16GB / 512GB / 3-Cell - 7
- DVD սկավառակ՝ ծրագրային ապահովմամբ WINDOWS 11 PRO - 7
- Համակարգիչ - 7X8G8EA OMEN by HP Desktop PC - 1
- Լազերային սքաներ - CHCNAV RSIO SLAM SCANER – 1

ԲԸՏՄ ընդգրկված է 2025-2030թթ. Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագրում:

Համագործակցության մեկնարկ Բնության պահպանության միջազգային միության (IUCN) հետ

ԲԸՏՄ համագործակցության մեկնարկի գործընթաց է սկսել նաև Բնության պահպանության միջազգային միության (IUCN) հետ: 2025 թվականին ՀՀ դարձել է IUCN-ի անդամ, ինչը հնարավորություն է տալիս մեր երկրին լիարժեքորեն ներգրավվել համաշխարհային

բնապահպանական համագործակցության հարթակներում և օգտվել միջազգային փորձից, նորարարական գործիքներից ու գործընկերային լայն ցանցից:

Այս նպատակով ԲԸՏՄ դիմել է Լիազոր մարմնին՝ ապահովելու IUCN-ին միանալու վերաբերյալ հետաքրքրության պաշտոնական գրության ներկայացումը Միության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրենին:

Գործընթացը գտնվում է իրականացման փուլում:

Լաբորատոր հագեցվածության ապահովում

ԲԸՏՄ կողմից 2025 թվականի ընթացքում ձեռք է բերել սարքավորումներ, որոնք հնարավորություն են տալիս տեղում արձանագրելու վնասակար նյութերի չափաքանակները և արդյունավետ իրականացնելու անալիտիկ հետազոտությունների նախապատրաստական աշխատանքները.

 Փոշու անալիզատոր CEM DT 9883M, որը հնարավորություն է տալիս մթնոլորտային օդում չափելու PM2.5 և PM10 տրամաչափերով փոշու մասնիկները, ածխածնի օքսիդի և ֆորմալդեհիդի և ցնդող օրգանական միացությունների կոնցենտրացիաները	 Անալիտիկ կշեռք, որը հնարավորություն է տալիս 0,00001 ճշտությամբ կշռել նյութերը
 Տեխնիկական կշեռք, որը հնարավորություն է տալիս 0,1 թվի ճշտությամբ կշռել հողերի նմուշները՝ մզվածքի պատրաստման համար	 Քիմիական ապակեղենի մաքրման և ախտահանման համար ուլտրաձայնային սարքավորում ultrasonic cleaner
 Չորանոց՝ քիմիական ապակեղենի և հիդրոսկոպիկ նյութերի չորացման համար	 Լաբորատոր թափահարիչ լուծույթների և հողերի նմուշների մզվածքների արագ և արդյունավետ խառնման համար

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- ԲԸՏՄ և ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի (այսուհետ՝ Ինստիտուտ) միջև կնքվել է համագործակցության հուշագիր՝ հաշվի առնելով ԲԸՏՄ շահագործման բնագավառում կարողությունների ձևավորման, ամրապնդման, համագործակցության ընդլայնման, ինչպես նաև հետազոտական աշխատանքների ոլորտում և հանրային քաղաքականության մշակման գործընթացին աջակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև գնահատելով Ինստիտուտի մասնագիտական ներուժը, հիդրոտեխնիկական լաբորատորիան, որը համարվում է տարածաշրջանի ամենամեծերից և համալրված է ժամանակակից փորձարարական ստենդներով և մոդելավորման գործիքներով:
- Տեղեկատվության հրապարակային մասն ամպային տիրույթում տեղադրելու և «Ամպայինն առաջինը» քաղաքականության մշակման և ներդրման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ամպային լուծումների քաղաքականության ներդրման և դրա համար իրավական հիմքերի ստեղծման անհրաժեշտությամբ: Ամպային ծառայությունների առաջատար մատակարարները խոշոր ներդրումներ են կատարում անվտանգության միջոցառումներում, ներառյալ գաղտնագրումը, մուտքի վերահսկումը և համապատասխանության վկայագրերը՝ ապահովելով անվտանգության այնպիսի մակարդակ, որն առանձին կազմակերպությունների համար կարող է դժվար լինել: Բացի դա ամպային ծառայությունները թույլ են տալիս պահանջարկից կախված հեշտությամբ ավելացնել կամ նվազեցնել ռեսուրսները՝ ապահովելով ճկունություն և ծախսարդյունավետություն:

  Իրավական ակտի ընդունման արդյունքում տեղեկատվական համակարգերի, տվյալների և տեղեկատվության պահպանման նպատակով ավանդական սերվերների փոխարեն կկիրառվեն ամպային լուծումներ, ինչը կապահովի պահուստավորման (back up) և վերականգնման ամուր մեխանիզմներ՝ տվյալների կորստից պաշտպանվելու համար և կնպաստի ՀՀ տեխնոլոգիական ենթակառուցվածքի արդիականացմանն ու առաջխաղացմանը:

- Օրենսդրությամբ սահմանված կադրերի համալրում իրականացնելու նպատակով, ինչպես նաև, նկատի ունենալով ԲԸՏՄ ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառույթների շրջանակը, ստուգումների կազմակերպման և անցկացման աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացումը, ԲԸՏՄ քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և ԸՎՎ ավելացնել Տարածական չափագրման և վերլուծությունների բաժին:

  Կառուցվածքային փոփոխության արդյունքում բյուջեի և աշխատակիցների թվաքանակի (հաստիքների) ավելացում չի նախատեսվում:
- Նախատեսվում է ԻԱՓՎ Իրավական աջակցության բաժնի կազմում ավելացնել 11 գլխավոր իրավաբանի հաստիք:

  Վարչության հաստիքացուցակը հաստատելիս (2021թ.) միայն դատական գործերի քանակը կազմել է 60 գործ, որը 2025 թվականի համեմատ աճել է մոտ 10 անգամ (530 գործ): Գործող հաստիքացուցակով դատական գործերի մասնակցությունը իրականացվում է վարչության իրավական աջակցության բաժնի 4 աշխատակիցների (բաժնի պետ և 3 գլխավոր իրավաբան) միջոցով:

  Կառուցվածքային փոփոխության արդյունքում բյուջեի և աշխատակիցների թվաքանակի (հաստիքների) ավելացում չի նախատեսվում: Վերը նշված փոփոխություններով աշխատակիցների կրճատում չի նախատեսվում, քանի որ փոփոխությունները իրականացվելու են թափուր հաստիքներով:
- Շարունակվել է ԲԸՏՄ և ՀՀ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության կրթահամալիրի հետ ձեռք բերված համագործակցությունը:

  ՆԳՆ կրթահամալիրի շարունակական համագործակցության շրջանակում ԲԸՏՄ 24 պետական տեսուչ մասնակցել է ծառայողական զենքի օգտագործման հատուկ պատրաստվածության, ինչպես նաև 20 աշխատող կրթահամալիրում մասնակցել է վերապատրաստման դասընթացներին հետևյալ թեմաներով.

- Բնապահպանական վերահսկողության ոլորտի օրենսդրական կարգավորումը
- Վարչարարության հասկացությունը և էությունը
- Վարչական վարույթ
- Վարչական իրավախախտման հասկացությունը և հատկանիշները

- Վարչական իրավախախտումների գործերով վարույթ
- Շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողություն (հսկողություն) իրականացնող տեսչական մարմնի քննությանը ենթակա վարչական իրավախախտումները
- Մթնոլորտի, հողային և ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը
- Վարչական պատասխանատվությունը ՀՀ-ում
- Վարչական վարույթի ապահովման միջոցները և վարչական իրավախախտման գործի վարույթին մասնակցող անձինք
- Բռնագրավման մասին որոշման կատարման վարույթը
- Հանցանքի հասկացությունը, հատկանիշները, տեսակները
- Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցանքները և հարակից վարչական իրավախախտումներից դրանց սահմանազատման չափանիշները
- Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցանքները:

Ուսումնառության վերջում ԲԸՏՄ աշխատողները հանձնել են ստուգարքներ վերը նշված թեմաներով:

- ➢ ԲԸՏՄ և Երևանի պետական համալսարանի միջև համագործակցության շրջանակում կազմակերպվել է 7 տեսուչի վերապատրաստում «Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի վերաբերյալ» թեմայով.
- Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի օգտագործումը՝ ArcGIS Desktop՝ ArcMap, ArCatalog, ArcToolbox, ArcScene և ArcGlobe, Arcmap ինտերֆեյս, ընդալայնումներ և գործիքներ
- Տարածական տվյալների մոդելների հիմնական առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները՝
- ➢ Վեկտորային տվյալների մոդելներ
- ➢ Ռաստերային տվյալների մոդելներ
- ➢ Տվյալների այլ մոդելներ (CAD, TIN և այլն)
- Կոորդինատային համակարգեր և գեոռեֆերենսում

- Աշխատանք շերտերի ինֆորմացիոն հարցման և ձևավորման մեխանիզմների հետ
- Տվյալների բազայի կառավարում
- Քարտեզի ձևավորում

ԲԸՏՄ կարիքների համար օրենքով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում՝ 32,116,478 ՀՀ դրամ արժողությամբ ձեռք են բերվել հետևյալ ապրանքները.

Աղյուսակ 43

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը	Քանակը	Միավորի գինը /դրամ/	Ընդհանուր գումարը /հազ.դրամ/
	Վարչական սարքավորումներ			
1	փոշու մասնիկների հաշվիչ	8	408,037.5	3,264.30
2	լաբորատորիական տեխնիկական կշեռք	1	69,999.6	70.00
3	լաբորատոր անալիտիկ կշեռք	1	969,600.0	969.60
4	լաբորատոր թափահարիչ	1	790,800.0	790.80
5	քիմիական ապակեղեն լվանալու սարք	1	541,000.0	541.00
6	չորացման պահարան	1	799,998.0	800.00
7	էպենդորֆ պիպետներ	1	225,000.0	225.00
8	Լիդար	1	12,355,200.0	12,355.20
9	անօդաչու թռչող համակարգ	1	3,789,600.0	3,789.60
10	անօդաչու թռչող համակարգ	1	3,390,000.0	3,390.00
11	անօդաչու թռչող համակարգ	1	4,948,980.0	4,948.98
12	TESTO 350 գազանալիզատորի թթվածնի սենսոր	1	147,600.0	147.60
13	TESTO 350 գազանալիզատորի նմուշառման զոնդ	1	824,400.0	824.40
				32,116.478

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2025 թվականին հայտարարված թափուր աշխատատեղերի վերաբերյալ 55 մրցութային հայտարարություն, որից 29-ը քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների համալրման վերաբերյալ: Ծառայողական քննության արդյունքները ներկայացված են *Աղյուսակ 44-ում*

Աղյուսակ 44

Հ/Հ	Ժամանակահատված	Ծառայողական քննության արդյունքում կայացվել է որոշում	
		Կարգապահական խախտման առկայության մասին	Անհետևանք
1	2022	2	6
2	2023	9	7
3	2024	29	26
4	2025	-	16

*2025 թվականի ընթացքում նշանակվել է 5 ծառայողական քննություն ընդհանուր թվով 16 աշխատակցի նկատմամբ, որի արդյունքում 16 պաշտոնատար անձի նկատմամբ նշանակված ծառայողական քննությունները թողնվել են անհետևանք:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Աղյուսակ 45

ԲԸՏՄ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ				
N	ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՄՍԱԹԻՎԸ	ԱՌԱՋԱՐԿԻ ԵԼԻՑ ՀԱՄԱՐԸ	ԱՌԱՋԱՐԿԻ ՔԱՆԱԿԸ
1.	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր	15.01.2025	01/29.6/4/195-2025	10
2.	Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ	29.01.2025	01/29.6/4/247-2025	3
3.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1423-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	31.03.2025	01/29.6/4/662-2025	8
4.	Քաղաքացիական դատավարության օրենսգրքի կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրների ու բացերի վերաբերյալ	04.02.2025	01/29.6/4/769-2025	1
5.	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	03.03.2025	01/29.6/4/1493-2025	1

6.	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ	04.06.2025	01/29.6/4/4203-2025	1
7.	«Բնապահպանական վերահսկողական մասին» ՀՀ օրենքում լրացումներ նախաձեռնելու առաջարկի վերաբերյան	17.06.2025	01/29.6/4/4583-2025	2

ԲԸՏՄ դեմ ներկայացված հայցադիմումների, դրանց վերաբերյալ պատասխանների, ԲԸՏՄ կողմից ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, ԲԸՏՄ մասնակցությամբ ընթացքի մեջ գտնվող և ավարտված դատական գործերի վերաբերյալ տեղեկատվություն

- 2025 թվականի ընթացքում ԲԸՏՄ կողմից դատարան է ներկայացվել թվով 14 հայցադիմում՝ առգրավված առարկան (զենք, լողամիջոցներ և այլն) բռնագրավելու պահանջով: ԲԸՏՄ կողմից 2024 թվականի ընթացքում ներկայացվել է թվով 16 հայցադիմում, 2023 թվականին՝ թվով 13 հայցադիմում, 2022 թվականին՝ թվով 25 հայցադիմում:
- 2025 թվականի ընթացքում ընդդեմ ԲԸՏՄ ներկայացվել է թվով 197 հայցադիմում, 2024 թվականի ընթացքում՝ թվով 196 հայցադիմում, 2023 թվականին ընթացքում՝ 81 հայցադիմում, 2022 թվականին՝ 23 հայցադիմում:
- 2025 թվականի ընթացքում ԲԸՏՄ կողմից ներկայացվել է 46 վերաքննիչ և 17 վճռաբեկ բողոք: 2024 թվականի ընթացքում ներկայացվել է 45 վերաքննիչ և 10 վճռաբեկ բողոք: 2023 թվականին ներկայացվել է թվով 29 վերաքննիչ և 8 վճռաբեկ բողոք: 2022 թվականի ընթացքում ներկայացվել է թվով 15 վերաքննիչ և 2 վճռաբեկ բողոք:
- 2025 թվականի ընթացքում ներկայացվել է թվով 218 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում: 2024 թվականին՝ թվով 159 հայցադիմումի պատասխան և/կամ դիրքորոշում: 2023 թվականին ներկայացվել է թվով 95 դիրքորոշում և հայցադիմումի պատասխան: 2022 թվականին ներկայացվել է 35 հայցադիմումի պատասխան կամ դիրքորոշում:
- 2022 թվականի ընթացքում ԲԸՏՄ մասնակցությամբ դատական գործերով հօգուտ ԲԸՏՄ կայացվել է թվով 6 դատական ակտ, ի վնաս ԲԸՏՄ՝ թվով 11 դատական ակտ:

2022 թվականի ընթացքում կայացված դատական ակտերի տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է՝

հօգուտ տեսչական մարմնի՝ 35,29 %

ի վնաս տեսչական մարմնի՝ 64,71 %

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացքի մեջ է եղել թվով 73 դատական գործ:

- 2023 թվականի ընթացքում ԲԸՏՄ մասնակցությամբ դատական գործերով հօգուտ ԲԸՏՄ կայացվել է թվով 22 դատական ակտ, ի վնաս ԲԸՏՄ՝ թվով 42 դատական ակտ:

2023 թվականի ընթացքում կայացված դատական ակտերի տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է՝

հօգուտ տեսչական մարմնի՝ 34,38 %

ի վնաս տեսչական մարմնի՝ 65,62 %

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացքի մեջ է եղել թվով 297 դատական գործ:

- 2024 թվականի ընթացքում ԲԸՏՄ մասնակցությամբ դատական գործերով հօգուտ ԲԸՏՄ կայացվել է թվով 69 դատական ակտ, ի վնաս ԲԸՏՄ՝ թվով 56 դատական ակտ:

  2024 թվականի ընթացքում կայացված դատական ակտերի տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է՝

  հօգուտ տեսչական մարմնի՝ 55,2 %

  ի վնաս տեսչական մարմնի՝ 44,8 %

- 2025 թվականի ընթացքում կայացվել է թվով 116 ի օգուտ, 92 ի վնաս և 13 մի մասով ի օգուտ, մի մասով ի վնաս դատական ակտ/բողոքարկման ենթակա/:

  2025 թվականի ընթացքում կայացված դատական ակտերի տոկոսային հարաբերակցությունը հետևյալն է՝

  հօգուտ տեսչական մարմնի՝ 52,5 %

  ի վնաս տեսչական մարմնի՝ 41,6 %

  մասնակի՝ 5,9 %

- 2025 թվականի ընթացքում ուժի մեջ է մտել թվով 36 դատական ակտ, որից՝ 16-ը հօգուտ ԲԸՏՄ, 20-ը՝ ի վնաս:

2025 դեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացքի մեջ է եղել թվով 691 դատական գործ:

Դատական գործերի քանակը և աճը պայմանավորված է ԲԸՏՄ կողմից իրականացվող տարեկան պլանային ստուգումների քանակի ավելացումով և տարեկան ծրագրով չնախատեսված՝ արտածրագրային ստուգումներով և այլ վարչական վարույթներով: Միաժամանակ դատական գործերի ավելացումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ԲԸՏՄ կողմից քննվող իրավախախտումների գործերով վերջին տարիներին Վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում կատարված փոփոխություններով խստացվել են պատասխանատվության միջոցները՝ վարչական տույժի չափերը:

- 2025 թվականի ընթացքում ԲԸՏՄ պաշտոնատար անձանց կողմից կայացրած վարչական ակտերի, գործողությունների և անգործությունների դեմ բերվել է թվով 67 վերադաս բողոք: Նույն ժամանակահատվածում քննվել է թվով 61 վերադաս բողոք, որից 15-ը բավարարվել է (այդ թվում մասնակի), 26-ը՝ մերժվել և 10-ը թողնվել առանց քննության: 2024 թվականի ընթացքում ԲԸՏՄ պաշտոնատար անձանց կողմից կայացրած վարչական ակտերի, գործողությունների և անգործությունների դեմ բերվել է թվով 49 վերադաս բողոք: Նույն ժամանակահատվածում քննվել են թվով 52 վերադաս բողոք՝ որից 31-ը մերժվել է, 2-ը բավարարվել է, 2-ը բավարարվել է մասնակի և 17-ը թողնվել է առանց քննության: 2023 թվականի ընթացքում ԲԸՏՄ բերվել է թվով 41 վերադաս բողոք: Նույն ժամանակահատվածում քննվել է թվով 36 վերադաս բողոք, որոնցից 2-ը բավարարվել է, 1-ը՝ բավարարվել է մասնակի, 9-ը թողնվել է առանց քննության, թվով 24 վերադաս բողոք մերժվել է: 2022 թվականի ընթացքում բերվել է թվով 16 վերադաս բողոք: Քննության արդյունքում թվով 10 վերադաս բողոք մերժվել է, թվով 4 վերադաս բողոք բավարարվել է, իսկ 2-ը բավարարվել է մասնակի:
- 2025 թվականի ընթացքում ԲԸՏՄ կողմից կայացվել է թվով 23՝ նախկինում կայացված՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեության և գործողությունների կասեցումները դադարեցնելու վերաբերյալ որոշում, 2024 թվականի ընթացքում՝ թվով 20, 2023 թվականի ընթացքում՝ թվով 11, 2022 թվականի ընթացքում՝ թվով 9 որոշում:
- 2025 թվականի ընթացքում ընդունվել է ստուգում իրականացնելու մասին թվով 410 հանձնարարագիր, 2024 թվականի ընթացքում՝ թվով 386 հանձնարարագիր, 2023 թվականի ընթացքում՝ թվով 272 հանձնարարագիր, 2022 թվականին՝ թվով 251 հանձնարարագիր:
- 2025 թվականի ընթացքում ընդունվել է դիտարկում իրականացնելու մասին թվով 63 հրաման, 2024 թվականի ընթացքում թվով 37 հրաման, 2023 թվականի ընթացքում թվով 16 հրաման, 2022 թվականի ընթացքում դիտարկում իրականացնելու մասին հրաման չի ընդունվել:

- 2025 թվականի ընթացքում ԲԸՏՄ կողմից ընդունվել է թվով 160 հրաման, որից 150-ն անհատական բնույթի, 10-ը՝ լոկալ: 2024 թվականի ընթացքում ԲԸՏՄ կողմից ընդունվել է թվով 146 հրաման, որից 137-ն՝ անհատական բնույթի, 9-ը՝ լոկալ, 2023 թվականի ընթացքում՝ 166 հրաման, որից 150-ն անհատական բնույթի, 16-ը՝ լոկալ, 2022 թվականի ընթացքում՝ 182 հրաման, որից 174-ն անհատական բնույթի, իսկ 8-ը՝ լոկալ:
- 2025 թվականի ընթացքում թվով 36 հրամանով աշխատակիցների նկատմամբ կիրառվել են խրախուսանքի միջոցներ:
- 2025 թվականի ընթացքում նշանակվել է թվով 5 ծառայողական քննություն, որի արդյունքում 16 պաշտոնատար անձանց նկատմամբ նշանակված ծառայողական քննությունները թողնվել են անհետևանք:
- 2025 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե և ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացվել է թվով 486 հաղորդում, 2024 թվականի ընթացքում թվով 401 հաղորդում, 2023 թվականի ընթացքում թվով 51 հաղորդում:
- 2025 թվականի ընթացքում ներկայացվել է թվով 26 օրենսդրական առաջարկություն, 2024 թվականի ընթացքում՝ 21, 2023 թվականի ընթացքում՝ 172, 2022 թվականին թվով 27 օրենսդրական առաջարկություն: